

Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ)

Գործողությունների ծրագրի
ուսումնասիրություն.

Հալաստան 2022-2024

Open
Government
Partnership



Independent
Reporting
Mechanism

Ներածություն

2021 թվականի հունվարին Անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) ներկայացրեց ԱՀՄ լրամշակման գործընթացի արդյունքում ստեղծված նոր պրոդուկտներ:¹ Նոր մոտեցման հիմքում ԱՀՄ-ի կողմից իրականացված ավելի քան 350 կայուն, անկախ, ապացույցների վրա հիմնված գնահատումների արդյունքում քաղաքացիներն են և «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) նախաձեռնության համայնքից եկած ներդրումը: ԱՀՄ-ն միտված է ներկայացնել պարզ, ժամկետներին և նպատակին համապատասխան, արդյունքալից պրոդուկտներ, որոնք նպաստում են ԲԿԳ գործողությունների ծրագրի առանցքային փուլերում նոր գիտելիքների ձեռքբերմանն ու հաշվետվողականությանը:

ԱՀՄ պրոդուկտներն են.

- **Համաստեղծման սեղմագիր.** ներկայացնում է գործողությունների նախորդ ծրագրերից քաղված դասերը, ծառայում է նախկին փորձից դասեր քաղելու նպատակին և հիմք է հանդիսանում համաստեղծման պլանավորման և նախագծման համար:
- **Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն.** գործողությունների ծրագրի բնութագրերի և ԱՀՄ-ի կողմից վեր հանված ուժեղ կողմերի ու մարտահրավերների արագ, անկախ տեխնիկական ուսումնասիրություն, որը հիմք կհանդիսանա ավելի արդյունավետ իրականացման գործընթացի համար:
- **Արդյունքների հաշվետվություն.** Իրականացման՝ քաղաքականության մակարդակի արդյունքների և փոփոխությունների կատարման ընթացքի վրա կենտրոնացված ընդհանուր գնահատում: Այս գնահատման ընթացքում նաև ստուգվում է ԲԿԳ կանոններին համապատասխանությունը և հիմք է տրվում հաշվետվողականության և երկարաժամկետ կտրվածքով նոր դասեր քաղելու համար: Այս պրոդուկտը ներդրվել է 2022 թվականին անցումային փուլում և առաջին անգամ կիրառվել 2022 թվականի օգոստոսի 31-ին ավարտվող գործողությունների ծրագրերի համար: Արդյունքների հաշվետվությունները ներկայացվում են իրականացման փուլի ավարտից հետո՝ չորս ամսվա ընթացքում:

Այս պրոդուկտը ներկայացնում է Հայաստանի 2022-2024 թթ. գործողությունների ծրագրի ԱՀՄ-ի ուսումնասիրությունը: Գործողությունների ծրագիրն ընդգրկում է 10 հանձնառություն: Այս գնահատման հիմքում գործողությունների ծրագրի արդյունավետության վերլուծությունն է՝ միտված իրականացմանն ու արդյունքների բարելավմանը: Ցուրաքանչյուր հանձնառության վերաբերյալ տվյալները տե՛ս Հավելված 1-ում: Գործողությունների ծրագրի ուսումնասիրման համար ԱՀՄ-ի կողմից կիրառված մեթոդաբանության և ցուցանիշների վերաբերյալ մանրամասները տե՛ս Բաժին III-ում:

***Հրաժարում.** Այս հրապարակումը իրականացվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Ղրա բովանդակությունը բացառապես Անկախ հաշվետվական մեխանիզմի (ԱՀՄ) պատասխանատվությունն է և*



Funded by the
European Union

ԱՀՄ Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024
Հանրային քննարկման համար հասանելի տարբերակ. մեջբերումներն արգելվում են

որևէ կերպ չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները: ԱՀՄ-ի ուսումնասիրություններն իրականացվում են տվյալ երկրի անկախ՝ հետազոտողների հետ համագործակցությամբ, վերանայվում են ԱՀՄ-ի անձնակազմի և ստուգվում Միջազգային փորձագիտական խմբի (ՄՓԽ) կողմից՝ միտված անկախության, օբյեկտիվության և ապացույցների վրա հիմնված հետազոտության ապահովմանը:

¹ «ԱՀՄ վերանայում» Բաց կառավարման գործընկերություն,
<https://www.opengovpartnership.org/process/accountability/about-the-irm/irm-refresh/>.

Բովանդակություն

Բաժին I. 2022-2024 թվականների գործողությունների ծրագրի ամփոփ նկարագիր	2
Բաժին II. Հավակնոտ հանձնառություններ Հայաստանի 2022-2024 թվականների գործողությունների ծրագրում	5
Բաժին III. Մեթոդաբանություն և ԱՀՄ ցուցանիշներ	33
Հավելված 1. Հանձնառության տվյալներ	37
Հավելված 2. Գործողությունների ծրագրի համաստեղծում	39

Բաժին I. 2022-2024 թվականների գործողությունների ծրագրի ամփոփ նկարագիր

Հայաստանի գործողությունների հինգերորդ ծրագիրը ներառում է մի շարք խոստումնալից հանձնառություններ՝ կապված տվյալների կառավարման, հանրային հաղորդակցության, մասնակցային բյուջետավորման, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների թափանցիկության և պետական գնումների հետ:

Արդյունքների կայունությանն ու ավելի ինտենսիվ հանրային մասնակցությանն ուղղված միջոցառումները կնպաստեն առավել արդյունավետ իրականացմանը:

Հայաստանի գործողությունների հինգերորդ (2022-2024 թթ.) ծրագիրն ընգրկում է 10 հանձնառություններ, որոնք հիմնականում միտված են կառավարության թափանցիկության բարելավմանը: Ներառված են պետական մարմինների կողմից տնօրինվող տվյալների, հանրության հետ հաղորդակցության, տեղեկատվության ազատության ապահովման, մասնակցային բյուջետավորման և դատական համակարգի թափանցիկության վերաբերյալ նոր հանձնառություններ: Դատական համակարգի թափանցիկության և մասնակցային բյուջետավորման վերաբերյալ հանձնառությունները համապատասխանում են ԱՀՄ-ի նախորդ զեկույցների առաջարկներին:

Ինչպես գործողությունների նախորդ ծրագրում, այս ծրագրում ընդգրկված հանձնառությունները ևս ներառում են օրենսդրական փոփոխություններ: Բոլոր հանձնառությունները սերտորեն կապված են այլ ազգային ծրագրերի (մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործողությունների ծրագրի) և Կայուն զարգացման նպատակների հետ: Որոշ հանձնառություններ միտված են նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի առաջարկներին: Թեև այս կապերը նպաստում են իրականացման գործընթացի ավելի սերտ աջակցությանը, քաղաքացիական հասարակությունը նշել է, որ կառավարությունը այսպես թե այնպես

ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Մասնակցություն՝ 2011 թվականից Ուսումնասիրվող գործողությունների ծրագիր՝ 2022-2024 թթ.

ԱՀՄ զեկույց՝ Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն
Հանձնառությունների թիվը՝ 10

Հանձնառությունների համառոտ նկարագիր.

Հանձնառություններ, որոնք համապատասխանում են բաց կառավարման շրջանակին՝ 9 (90%)
Արդյունքներին միտված զգալի ներուժ ունեցող հանձնառություններ՝ 1 (10%)
Խոստումնալից հանձնառություններ՝ 5

Քաղաքականության ոլորտները.

Նախորդ գործողությունների ծրագրերից բխող՝

- Հողի սեփականության թափանցիկություն,
- Իրական շահառուների թափանցիկություն,
- Սոցիալական պաշտպանություն:

Այս գործողությունների ծրագրում ներդրված՝

- Պետական տվյալների քաղաքականություն,
- Հանրային հաղորդակցություն,
- Տեղեկատվության ազատություն,
- Մասնակցային բյուջետավորում,
- Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նվերներ,
- Բաց արդարադատություն,
- Պետական գնումներ:

Համաստեղծման վերաբերյալ ԲԿԳ նվազագույն պահանջների համապատասխանություն.

Իրականացվել է ԲԿԳ գործընթացի սկզբունքների համաձայն՝ ոչ

նախատեսում էր իրականացնել այդ գործողությունները՝ անկախ գործողությունների ծրագրում դրանց ներառումից:

Գործողությունների նախորդ ծրագրի համեմատ՝ համաստեղծման գործընթացում տեղ գտած հանրային խորհրդակցություններն ավելի լայն աշխարհագրական ընդգրկում ունեին, իսկ կառավարությունն ավելի ակտիվ է եղել հանրային իրազեկման գործընթացում: Միջազգային դոնորները շարունակել են աջակցել համաստեղծման գործընթացին: Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրն աջակցել է 2021 թվականի դեկտեմբերի հանդիպմանը՝ սատարելով համաստեղծման գործընթացին: Եվրամիությունը (ԵՄ) աջակցել է կառավարությանը և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ)՝ ութ մարզերում շահագրգիռ կողմերի հետ առցանց խորհրդակցություններ իրականացնելու, մայրաքաղաքից դուրս համայնքային հանդիպումներ կազմակերպելու և ԲԿԳ-ի մասին իրազեկմանն ուղղված լայնամասշտաբ միջոցառումներ անցկացնելու նպատակով: Շահագրգիռ կողմերը դրական են գնահատել երկխոսության որակը և առցանց հանդիպումների աշխարհագրական ծածկույթը: Ավելին, կառավարությունն ավելի նախաձեռնող էր հանրային իրազեկման գործում՝ ներկայացնելով ԲԿԳ-ն հանրային հեռուստատեսության, ռադիոյի և ավանդական լրատվամիջոցների ու սոցիալական ցանցերի միջոցով: Հանձնառություններին առնչվող առաջարկները հավաքագրվել են էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև առաջին անգամ կառավարության ԲԿԳ կայքում հասանելի հատուկ ձևաթղթի միջոցով: Բացի այդ, որոշ առաջարկներ են ներկայացվել աշխատաժողովի ընթացքում՝ փորձագիտական խմբերի կողմից, որոնք կազմավորվել էին ըստ գործողությունների ծրագրի առաջնահերթությունների: Այս մոտեցումը նորարարություն էր և արտացոլում էր ԱՀՄ նախորդ զեկույցների առաջարկները:

Կառավարությունը ուսումնասիրել է առաջարկները՝ հիմք ընդունելով ԲԿԳ արժեքների և կառավարության առկա առաջնահերթությունների հետ դրանց համապատասխանությունը և ՔՀԿ գործընկերների հետ համատեղ կազմակերպել շահագրգիռ կողմերի մասնակցությամբ թեմատիկ սեմինարներ՝ կարճ ցուցակում ընդգրկված հանձնառությունների հետագա մշակման նպատակով: Ըստ շահագրգիռ կողմերի՝ գործողությունների ծրագիրն ընդհանուր առմամբ անդրադառնում է կառավարության և քաղաքացիական հասարակության առաջնահերթություններին և նախորդ ծրագրերի համեմատ ավելի ռազմավարական և համապարփակ բնույթ ունի:

ԱՀՄ-ն մանրամասն գնահատել է հինգ հանձնառություն: Այս հանձնառությունները խոստումնալից են համարվել, քանի որ որպես առաջնահերթ են նշվել քաղաքացիական հասարակության դերակատարների կողմից և վերաբերում են քաղաքականության այն ոլորտներին, որոնք առանցքային են Հայաստանի բաց կառավարման համատեքստում: Հանձնառություն 1-ը օրենսդրորեն կսահմանի պետական բոլոր մարմինների կողմից տվյալների կառավարման քաղաքականությունը և բաց տվյալների ընթացակարգերը: Այն պետական գերատեսչությունների համար խիստ անհրաժեշտ պահանջներ կներկայացնի առ այն, թե ո՞ր տեղեկատվությունը պետք է հանրությանը հասանելի լինի և տրամադրվի անվճար: Հանձնառություն 2-ը կստեղծի կառավարության համար հանրային հաղորդակցության ռազմավարություն, որը կօգնի անհրաժեշտ հետևողականություն ապահովել՝ հասարակության հետ պետական մարմինների հաղորդակցման, տեղեկատվական բացերի ու ապատեղեկատվության խնդիրների հասցեագրման գործընթացներում: Հանձնառություն 5-ը կառուցակարգեր կսահմանի համայնքային բյուջեի

մի մասը քաղաքացիների կողմից նախաձեռնված և ընտրված ծրագրերին հատկացնելու նպատակով: Այն նախատեսում է մասնակցային բյուջետավորման գործիքներ մշակել երեք համայնքներում՝ նպատակ ունենալով աջակցել ավելի մեծ թվով համայնքների կողմից մասնակցային բյուջետավորման իրականացմանը: Հանձնառություն 7-ի արդյունքում կստեղծվի հանրային ծառայողների կողմից իրենց պաշտոնական ծառայությունների իրականացման հետ կապված ստացած նվերների ռեեստր և կսահմանվի պետությանը նվերների հանձնման կարգը: Չնայած ռեեստրի և համապատասխան ընթացակարգերի իրականացման հնարավոր մարտահրավերներին, հանձնառությունը կարող է բարելավել նվերների հանձնման և ընդունման թափանցիկությունը: Հանձնառություն 8-ը կստեղծի պետական գնումների էլեկտրոնային հարթակ, որը բաց տվյալների ձևաչափով տեղեկատվություն կներառի պետական գնումների բոլոր փուլերի վերաբերյալ: Այն կդրսևագրի տվյալների վերլուծությունը, հանրային վերահսկողությունը և գնումների վիճակագրության հրապարակումը իրական ժամանակի ռեժիմում: Այն նաև փոխգործելի կլինի իրական շահառուների ռեգիստրի հետ՝ հնարավորություն ընձեռելով օգտատերերին տեղեկություն ստանալ պետական գնումների մրցույթներին մասնակցող բոլոր ընկերությունների իրական շահառուների մասին:

Իրականացման ընթացքում հետևողական հանրային մասնակցության, իսկ հետագայում՝ արդյունքների կայունության ապահովումն առանցքային նշանակություն ունի: Մի շարք հանձնառություններ, ինչպիսիք են ազգային գեոպորտալը (հանձնառություն 6), նվերների ռեեստրը, էլեկտրոնային արդարադատությունը (հանձնառություն 9) և էլեկտրոնային գնումները, միտված են համապատասխան հարթակների ստեղծմանը, այնինչ վերահսկողությունն ու հանրային իրազեկումը նախատեսվում է իրականացնել գործողությունների ծրագրի շրջանակներից դուրս: Կարևոր է, որ կառավարությունը և քաղաքացիական հասարակությունն անհրաժեշտ տեխնիկական աջակցություն ցուցաբերեն հանրային ծառայողներին, որպեսզի հնարավոր լինի հասնել հանձնառությունների ամբողջական ներուժի իրացմանը՝ բաց կառավարման ապահովման ուղղությամբ:

Բաժին II. Խոստումնալից հանձնառություններ Հայաստանի 2022–2024 թվականների գործողությունների ծրագրում

Ստորև վերլուծության շրջանակներում անդրադարձ է արվում այն հինգ հանձնառություններին, որոնք, ըստ ԱՀՄ-ի, ունեն առավել խոստումնալից արդյունքների ապահովման ներուժ: Խոստումնալից հանձնառությունները վերաբերում են քաղաքականության այն ոլորտներին, որոնք կարևոր են շահագրգիռ կողմերի կամ երկրի համատեքստի համար: Դրանք պետք է լինեն ստուգելի, համապատասխանեն բաց կառավարման շրջանակին և ապահովեն չափավոր կամ զգալի ներուժ ունեցող արդյունքներ: Այս ուսումնասիրությունը նաև տրամադրում է մարտահրավերների, հնարավորությունների և առաջարկների վերլուծություն՝ միտված դասեր քաղելուն և գործողությունների տվյալ ծրագրի իրականացման գործընթացի խթանմանը:

Աղյուսակ 1. Խոստումնալից հանձնառություններ

Խոստումնալից հանձնառություններ
Հանձնառություն 1. Տվյալների քաղաքականությունը սահմանող օրենսդրություն: Այս հանձնառությունը նախատեսում է պետական մարմինների կողմից տնօրինվող ողջ տեղեկատվության համար տվյալների կառավարման միասնական քաղաքականության ներդրում և կառավարությունում բաց տվյալների քաղաքականության սահմանում:
Հանձնառություն 2. Պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետություն: Այս հանձնառությունը նախատեսում է բոլոր պետական մարմինների համար հանրության հետ իրենց հաղորդակցությունն ուղղորդելու նպատակով միասնական քաղաքականության մշակում, ինչպես նաև մասնակցային կառուցակարգերում հանրությունից ստացած հետադարձ կապի կիրառման եղանակների վերանայում:
Հանձնառություն 5. Մասնակցային բյուջետավորում տեղական մակարդակում: Այս հանձնառությունը ենթադրում է ուղեցույցների և գործիքակազմի մշակում՝ մասնակցային բյուջետավորման ներդրմամբ հետաքրքրված տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցելու նպատակով: Այս հանձնառության ներքո կիրականացվի նաև մասնակցային բյուջետավորման փորձարկում տեղական ինքնակառավարման երեք մարմիններում:
Հանձնառություն 7. Հանրային ծառայողների նվերների ռեեստր: Այս հանձնառությունը ենթադրում է հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների վերաբերյալ տեղեկություն պարունակող հանրային ռեեստրի ներդրում: Կսահմանվեն նաև նվերների հայտարարագրման և գրանցման պարտադիր ընթացակարգերը:
Հանձնառություն 8. Էլեկտրոնային գնումների համապարփակ համակարգ: Այս հանձնառությունը նախատեսում է ստեղծել գնումների մասին տեղեկատվության ավտոմատացված և անվճար հրապարակման միասնական հարթակ: Հարթակը նաև փոխգործելի կդառնա իրական շահառուների ռեգիստրի հետ՝ հնարավորություն ընձեռելով օգտատերերին հեշտությամբ տեղեկություն ստանալ պետական գնումների մրցույթների հայտատուների իրական շահառուների մասին:

Հանձնառություն 1. Տվյալների քաղաքականությունը սահմանող օրենսդրություն

Պատասխանատու մարմին՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն:

Հանձնառության ամբողջական նկարագիրը տե՛ս Հայաստանի 2022-2024 թթ. գործողությունների ծրագրի Հանձնառություն 1-ում՝ [այստեղ](#):

Համատեքստ և նպատակներ

Համաձայն այս հանձնառության՝ կառավարությունը տվյալների կառավարման միասնական քաղաքականություն կներդնի պետության կողմից տնօրինվող ողջ տեղեկատվության համար (այսինքն՝ կիստակեցնի տվյալների շտեմարանների իրավական հիմքերն ու չափորոշիչները և կապահովի մետատվյալների հանրային հասանելիությունը): Այս քաղաքականությունը նաև կսահմանի, թե որ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի հանրությանն անվճար հիմունքներով, իսկ որը պետք է տրամադրվի վճարովի: Համաստեղծման գործընթացում քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված մի շարք առաջարկներ վերաբերում էին առանձին տվյալների բազաների և գրանցամատյանների հրապարակմանը: Այս հանձնառության ներքո ընդհանուր կարգավորող քաղաքականություն կսահմանվի, որը կնպաստի այս ոլորտում առկա խնդիրների հաղթահարմանը:

Այս հանձնառությունը սերտորեն կապված է Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության հետ, որը միտված է տվյալների համապարփակ քաղաքականության և տվյալների կառավարման ինստիտուցիոնալ համակարգի ապահովմանը:² Հանձնառությունը համահունչ է նաև ՀՀ կառավարության 2021–2026 թթ. ծրագրին, որտեղ նպատակ է դրված արդիականացնել վարչական տեղեկատվական համակարգերը և պաշտոնական վիճակագրության կարողությունները տվյալների միասնական քաղաքականության միջոցով:³ Հանձնառությունը կնպաստի կառավարության թափանցիկությանը՝ սահմանելով պետության կողմից տնօրինվող տեղեկատվության հրապարակման հստակ կանոնակարգեր և ապահովելով համապատասխանությունը բաց տվյալների սկզբունքներին:

Արդյունքին միտված ներուժը՝ զգալի

Ըստ ԱՀՄ-ի գնահատման՝ այս հանձնառությունը զգալի ներուժ ունի պետության կողմից տնօրինվող տվյալների հրապարակման գործընթացում ակնկալվող արդյունքների տեսանկյունից: Լիարժեք իրականացման դեպքում այս հանձնառությունը կհանգեցնի պետության կողմից տվյալների կառավարման և հրապարակման, այդ թվում՝ բաց տվյալների չափորոշիչների կիրառման վերաբերյալ առաջին լայնամասշտաբ, իրավական պարտադիր ուժ ունեցող, համապարփակ կարգավորումների մշակմանն ու ներդրմանը: Թեև տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը⁴ և ընթացակարգերը սահմանում են տեղեկատվության կառավարման և տրամադրման հիմնական կանոնները, դրանք համապարփակ չեն և բաց տվյալներին վերաբերող որևէ պաշտոնական քաղաքականություն չեն պարունակում:⁵ Կառավարությունը նախկինում բաց տվյալներին առնչվող բազմաթիվ հատվածային նախաձեռնություններով է հանդես եկել: Օրինակ՝ ԲԿԳ նախորդ գործողությունների ծրագրերը ներառում էին հանրային պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման, իրական շահառուների, կրթության և ինտերակտիվ պետական բյուջեի վերաբերյալ բաց տվյալների հրապարակման հանձնառություններ: ԲԿԳ

նախաձեռնության շրջանակներից դուրս ստեղծված այլ հարթակներ ներառում են իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստրը, պետական գնումների պլանավորման և պայմանագրերի կառավարման հարթակը և իրավական տեղեկատվական համակարգը:⁶ Այնուամենայնիվ, նման նախաձեռնությունների համար որևէ համապարփակ մոտեցում կամ միասնական կարգավորող սկզբունք մինչ օրս չի մշակվել:

Այս հանձնառությունը կհասցեագրի միասնական քաղաքականության բացակայության խնդիրը՝ հստակեցնելով կոնկրետ պետական մարմինների (ինչպես նաև հանրային ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների) կողմից տնօրինվող տվյալների առանձին տեսակների նկատմամբ հանրային հասանելիության սահմանափակումների հիմքերը:⁷ Օրինակ՝ ներկայումս լրագրողները կարող են անվճար ստանալ պետական ռեգիստրում գրանցված ընկերությունների հիմնադիրների և բաժնետերերի մասին տեղեկությունները, սակայն այլ կազմակերպությունների և քաղաքացիների համար այդ տեղեկությունը վճարովի է: Սա կարող է դժվարեցնել իրական շահառուների տվյալների ստուգումը և շահերի հնարավոր բախման կամ կոռուպցիոն ռիսկերի իրավիճակների բացահայտումը: Նմանապես, պետական կադաստրի տվյալները տրամադրվում են վճարովի հիմունքներով, մինչդեռ այս տեղեկատվությունը կարող է օգնել օգտատերերին ստուգել պաշտոնյաների գույքի ու եկամուտների հայտարարագրերը կամ շահերի բախումը հանրային սեփականության օտարման գործընթացում: Ներկայումս պետական մարմինների կողմից չկա որևէ հետևողական մոտեցում առ այն, թե որ տվյալները պետք է հասանելի լինեն հանրությանը և որ տվյալները պետք է գաղտնի համարվեն: Օրինակ՝ որոշ պետական մարմիններ հրապարակում են տեղեկատվություն հանրային ծառայողների մասին, մինչդեռ մյուսները դա համարում են անձնական տվյալներ, որոնք, հետևաբար, հրապարակման ենթակա չեն: Ավելին, որոշ տեղեկություններ կարող են մերժվել պետական գաղտնիքի պատրվակով՝ առանց պատշաճ հիմնավորման: Այս հանձնառությունը կօգնի կարևոր պարզաբանումներ տրամադրել պետական տեղեկատվության հասանելիությունը սահմանափակելու հիմքերի վերաբերյալ և հնարավորության դեպքում՝ վերացնել անհարկի սահմանափակումները:

Այս հանձնառությունը նաև կներդնի բաց տվյալների համապետական պաշտոնական առաջին քաղաքականությունը Հայաստանում, որն առաջնահերթություն է քաղաքացիական հասարակության համար:⁸ Թեև որոշ հարթակներ և ռեգիստրներ բաց տվյալների սկզբունքներ են ներառում, շատ պետական գերատեսչություններ դեռևս հրապարակում են PDF ձևաչափով փաստաթղթեր, որոնք հաճախ մեքենայական ընթերցման ենթակա չեն (օրինակ՝ սկանավորված տեքստ): Թեև «Open Data Watch» կազմակերպության «Բաց տվյալների գույքագրում» հետազոտությամբ Հայաստանը բարելավել է իր դիրքերը՝ 2018թ.-ի 53-րդ տեղից 2020թ.-ին հասնելով 57-ի, բաց լինելու միավորը մնացել է նույնը՝ 55:⁹ Երկարաժամկետ կտրվածքում այս հանձնառությունը կարող է ընդլայնել հրապարակման ենթակա պետական տվյալների շրջանակը և բարելավել տվյալների կիրառելիության ու հասանելիության մակարդակը՝ շնորհիվ բաց տվյալների չափորոշիչներին ցանկացած տվյալի համապատասխանության պահանջի:

Չնայած թվային տվյալների ծավալի աճին, կառավարությունը չունի էլեկտրոնային եղանակով այդ տվյալների կառավարումը, պաշտպանությունը և արխիվացումը սահմանող կարգեր: Նոր ընթացակարգերը կանդրադառնան նաև անձնական տվյալների թերկառավարման հետ կապված խնդիրներին (օրինակ՝ տվյալների արտահոսքին)՝

ԱՀՄ Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024
Հանրային քննարկման համար հասանելի տարբերակ. մեջբերումներն արգելվում են

սահմանելով կառավարման, մշակման, պահպանման և հրապարակման համապետական
չափորոշիչներ:

Իրականացման համար հնարավորություններ, մարտահրավերներ և առաջարկներ

Թեև հանձնառությունը նախատեսում է պետության կողմից տնօրինվող տեղեկատվությունը
կարգավորող կարևոր իրավական շրջանակ, այն չի հստակեցնում օրենսդրության մի շարք
կարևոր բաղադրիչներ: Օրինակ՝ հստակ չի սահմանվում, թե նախատեսվող օրենսդրությունը
ու՞մ կներառի որպես տեղեկություն տնօրինող (օրինակ՝ պետական կառավարման
մարմիններ, պետական կազմակերպություններ, տեղական ինքնակառավարման
մարմիններ, հանրային ծառայություն մատուցողներ), ինչ տիպի իրավական ակտ է
նախատեսվում ընդունել (օրինակ՝ կառավարության կողմից ընդունված կարգավորում,
օրենք կամ այլ), կամ խախտումների համար պատժամիջոցներ լինելու են արդյոք: Ի լրումն,
իրականացման հնարավոր մարտահրավերներից է հանրային ծառայողների՝ տվյալների
շտեմարաններ կառավարելու կարողությունների բացակայությունը և բաց տվյալների
չափորոշիչների ու անձնական տվյալների օգտագործման վերաբերյալ գիտելիքի պակասը:

Զգալի արդյունքների ապահովման նպատակով ԱՀՄ-ն իրականացման ընթացքում
առաջարկում է հետևյալ քայլերը՝

- **Օրենսդրության մեջ հստակ սահմանել հրապարակման ենթակա տվյալների
շարքերը, հաստատման ենթակա բաց տվյալների չափորոշիչները, կանոնավոր
թարմացումների պահանջը և խախտման համար նախատեսվող պատժամիջոցները:**
Հիմք ընդունելով քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերի
առաջարկները՝ կառավարությունը կարող է առաջնահերթություն տալ պետական
ռեգիստրի և պետական կադաստրի տվյալների, ինչպես նաև պետական
սեփականություն հանդիսացող գույքի և դրա օգտագործման վերաբերյալ
տեղեկատվության՝ ներառյալ վարձակալության պայմանագրերի, թանգարանային
նմուշների ցանկի, հանրության և քաղաքացիական հասարակության հետ
քննարկումների արդյունքում սահմանված այլ տեղեկատվության անվճար
հիմունքներով հրապարակմանը:¹⁰ Բաց տվյալների և հանրային հատվածի
տեղեկատվության վերաօգտագործման վերաբերյալ Եվրոպական միության (ԵՄ)
2019/1024 դիրեկտիվը կարող է օգտակար լինել բաց տվյալների կարգերի սահմանման
գործում¹¹, բաց տվյալների վերաբերյալ տարբեր ուղեցույցների հետ մեկտեղ:¹²
Հայաստանը կարող է նաև դասեր քաղել բաց տվյալների ազգային պորտալի
ստեղծմանը հետամուտ այնպիսի երկրների փորձից, ինչպիսիք են Կանադան,
Էստոնիան, Ֆինլանդիան և Ուկրաինան:¹³
- **Տվյալների մասին օրենսդրության մշակման և իրականացման գործընթացում
ներգրավել բաց տվյալների օգտատերերին:** Օրենսդրության արդյունավետության
ապահովման նպատակով դրա մշակման և իրականացման գործընթացում
առանցքային կարևորություն ունի տվյալների հավանական օգտատերերի, այդ թվում՝
քաղաքացիական հասարակության և հետաքննող լրագրողների կարիքները հաշվի
առնելը: Օրինակ՝ իր 2016-2018 թթ. գործողությունների ծրագրում Իռլանդիան մշակեց
եռամյա բաց տվյալների ճանապարհային քարտեզ՝ խորհրդակցելով պետական
մարմինների, բիզնես ընկերությունների, քաղաքացիական հասարակության
կազմակերպությունների (ՔՀԿ) և հետազոտողների հետ:¹⁴ Ռումինիան 2022-2024 թթ.
իր գործողությունների ծրագրում ներգրավում է քաղաքացիական հասարակությանը՝

բաց տվյալների մասին իր օրենքի գործարկման նպատակով արժեքավոր տվյալների շարքերը հստակեցնելու համար: Հանձնառությունը նաև նախատեսում է կառավարությունում «ըստ նախագծի և լռելյայն բաց» սկզբունքի ներդրում և քաղաքացիների շրջանում տվյալների հետ աշխատելու գրագիտության բարձրացում:¹⁵

- **Վերապատրաստել տվյալների հետ աշխատող պետական կառավարման, տեղական կառավարման մարմինների և հանրային ծառայությունների մատուցող կազմակերպությունների անձնակազմին:** Կառավարությունը կարող է փորձագետների և գործընկեր ՔՀԿ-ների հետ համատեղ վերապատրաստումներ անցկացնել՝ միտված տվյալների քաղաքականության արդյունավետ իրականացմանը: Բացի այդ, տվյալների կառավարման օրենսդրությունն ու հանրային ծառայողների վերապատրաստումները պետք է հատուկ անդրադառնան տվյալների անվտանգության խնդիրներին: Օրինակ, Խորվաթիայի 2022-2024 թթ. գործողությունների ծրագրում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ հանրային ծառայողների և պաշտոնյաների վերապատրաստման մասին հանձնառություն է գետեղված:¹⁶
- **Հստակեցնել, թե արդյոք օրենսդրությունը տարածվում է հանրային ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունների և համայնքային իշխանությունների վրա:** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում տեղեկատվություն տնօրինողների ցանկում ընդգրկված են նաև հանրային ծառայություններ մատուցող մասնավոր ընկերությունները: Այդուհանդերձ, հարկ է հստակեցնել, թե արդյոք նոր քաղաքականությունը կիրառելի է լինելու այս ընկերությունների համար և եթե այո՝ ինչ ծավալով: Կառավարությունը կարող է դիտարկել տվյալների կառավարման քաղաքականության կիրառումը նաև հանրային ծառայություններ մատուցող մասնավոր դերակատարների և համայնքապետարանների համար:

Հանձնառություն 2. Պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետություն

Պատասխանատու մարմին՝ Վարչապետի աշխատակազմ

Հանձնառության ամբողջական նկարագիրը տե՛ս Հայաստանի 2022-2024 թթ. գործողությունների ծրագրի Հանձնառություն 2-ում՝ [այստեղ](#):

Համատեքստ և նպատակներ

Համաձայն այս հանձնառության՝ վարչապետի աշխատակազմը կմշակի միասնական քաղաքականություն՝ բոլոր պետական մարմիններին հանրության հետ իրենց հաղորդակցության գործընթացում ուղղորդելու համար, այդ թվում՝ տեղեկատվության տրամադրման և հանրային արձագանքի ապահովման գործում: Հանձնառությունը համատեղ մշակվել է քաղաքացիական հասարակության և կառավարության կողմից և արտացոլում է Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության դրույթները, որոնք սահմանում են տեղեկատվական և ռազմավարական հաղորդակցության քաղաքականության անհրաժեշտությունը:¹⁷ Հանձնառությունն արտացոլում է նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հանձնարարականներն առ այն, որ կառավարությունները պետք է ունենան հանրային հաղորդակցությունն ուղղորդելու համար համապատասխան մանդատ ու ռազմավարություն:¹⁸

Տեղեկատվության մատչելիության մասին Հայաստանի օրենսդրությունը և պետական գերատեսչություններում հաղորդակցության համար պատասխանատու ստորաբաժանումների գործունեությանը վերաբերող ընթացակարգերը որոշակի շրջանակ են սահմանում հանրային հաղորդակցության համար: Այնուամենայնիվ, դեռևս չի մշակվել այնպիսի պետական քաղաքականություն, որը կսահմաներ հանրային հաղորդակցության ինստիտուցիոնալ կառուցակարգերը և մոտեցումները, օրինակ՝ պետական գերատեսչությունների կողմից հաղորդակցության ծրագրերի մշակումը կամ իրականացվող քաղաքականության և բարեփոխումների վերաբերյալ կանոնավոր ու կանխագիշ հաղորդակցությունը ապահովելու համար: Արդյունքում հանրության հետ պետական մարմինների հաղորդակցությունը հաճախ հատվածական է և կախված է պաշտոնյաների ու նրանց անձնակազմի անձնական վերաբերմունքից և կարողություններից: 2018 թվականի «թավշյա հեղափոխությունից» հետո բարձրաստիճան պաշտոնյաներն սկսեցին ավելի ու ավելի շատ կիրառել սոցիալական ցանցերը՝ սեփական նախաձեռնությամբ հանրությանը տեղեկատվություն տրամադրելու նպատակով, մինչդեռ պաշտոնական ալիքները հաճախ թերանում են ժամանակին և արդյունավետ տեղեկատվություն տրամադրել:¹⁹ Պաշտոնական տեղեկատվության բացերը, սոցիալական ցանցերի լայնածավալ կիրառության հետ մեկտեղ, նպաստել են ապատեղեկատվության և կեղծ լուրերի տարածմանը:²⁰ COVID-19 համավարակը, 2020թ. արցախյան 44-օրյա պատերազմը և հետագա քաղաքական ջնջումները ընդգծեցին հանրության հետ կառավարության հաղորդակցության կանոնակարգման անհրաժեշտությունը, հատկապես արտակարգ իրավիճակներում:

Բացի այդ, քաղաքականության մշակման գործում հանրային մասնակցության տարբեր կառուցակարգեր կան, օրինակ՝ հասարակական խորհուրդները, օրենքների նախագծերի վերաբերյալ առցանց խորհրդակցությունները, հանրային լսումները և հարցումները: Այնուամենայնիվ, այս կառուցակարգերից շատերը գործնականում լիարժեք չեն աշխատում:²¹ Ներկա դրությամբ, բացառությամբ e-draft.am-ում օրենսդրական նախագծերի պարտադիր հրապարակման, քննարկումների կազմակերպման և հանրային կարծիքների հավաքագրման համար որևէ ինստիտուցիոնալ աջակցություն չկա (այսինքն՝ մանրամասն ընթացակարգեր կամ հատկացված աշխատակազմ ու ռեսուրսներ): Այս բացը լրացնելու նպատակով հանձնառությունը նախատեսում է վարչապետի աշխատակազմում ստեղծել հատուկ ստորաբաժանում, որը հանրային մասնակցության մեթոդաբանություն կմշակի, ֆիզիկական տարածք կհատկացնի հանրության հետ հանդիպումների համար և կաջակցի պետական մարմիններին հանրային քննարկումներ կազմակերպելիս: Այս ստորաբաժանումը կխթանի կառավարության նախաձեռնություններում ավելի համակարգված հանրային մասնակցությունը, այդ թվում՝ որոշակի քաղաքականությանը կամ պետական մարմիններին առնչվող թիրախ սոցիալական խմբերի հետ հաղորդակցության ապահովումը:

Հանձնառությունը կարող է նպաստել կառավարության թափանցիկությանը՝ դյուրացնելով հետևողական և կանխագիշ տեղեկատվության տրամադրումը հանրությանը: Այն նաև կնպաստի քաղաքացիական մասնակցությանը, քանի որ վարչապետի աշխատակազմում ստեղծվելիք ստորաբաժանումը նպատակ ունի հանրային մասնակցության ավելի բազմազան ուղիներ ստեղծել:

Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր

Այս հանձնառությունը կարող է բարելավել պետական մարմինների կողմից հանրությանը տեղեկատվության տրամադրման գործընթացը: Հայաստանն առաջին անգամ պետական ողջ

ապարատի համար կունենա ռազմավարություն, որը կկարգավորի հանրային հաղորդակցության ինստիտուցիոնալ մեխանիզմները և ընթացակարգերը: Քաղաքացիական հասարակության ներկայացուցչի կարծիքով՝ ռազմավարությունը կնպաստի հանրությանը ժամանակին և հետևողական տեղեկատվության տրամադրմանը:²² Ընթացակարգերը կարող են նպաստել պետական գերատեսչությունների հանրային կապերի և հաղորդակցության ստորաբաժանումների արդյունավետությանը՝ հանրության հետ հաղորդակցության ընթացքում կիրառվող բառապաշարի ստանդարտացման միջոցով: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից մեկը լիափոխ է, որ ընթացակարգերը ի վերջո կփոխեն այն պետական պաշտոնյաների վերաբերմունքը, որոնք ներկայումս չեն կարևորում պետական հաստատությունների ընթացիկ քաղաքականության, ծրագրերի և ծառայությունների վերաբերյալ հանրությանը տեղեկատվության տրամադրումը:²³ Ըստ կառավարության ներկայացուցչի՝ հաղորդակցության այս ռազմավարության շրջանակներում մշակված քաղաքականությունն ու ընթացակարգերը պարտադիր կլինեն բոլոր պետական մարմինների համար:²⁴ Այնուամենայնիվ, քանի որ գործողությունների ծրագիրը պետական կառավարման բոլոր մարմինների համար պարտադիր քաղաքականությունների ու ընթացակարգերի, ինչպես նաև մշտադիտարկման միջոցառումների օրենսդրական շրջանակ չի սահմանում, ԱՀՄ-ն արդյունքին միտված ներուժը գնահատել է որպես չափավոր:

Հանձնառության ներքո կներդրվեն նաև պետական արձագանքի համապատասխան կառուցակարգեր՝ ապակողմնորոշիչ և կեղծ տեղեկատվության տարածումը կանխելու նպատակով: Ժամանակին և համարժեք հաղորդակցությունը (հատկապես ճգնաժամի իրավիճակում), որը կօգնի կանխել ապակողմնորոշիչ և կեղծ տեղեկատվության տարածումը, կարող է բարելավել հանրության վստահությունը կառավարության գործողությունների և ժողովրդավարական գործընթացի նկատմամբ: Բացի այդ, հանձնառությունը կկարգավորի զանգվածային լրատվամիջոցների հետ կառավարության հարաբերությունները և ընդհանուր սկզբունքներ կներդնի մամուլ ասուլիսներ կազմակերպելու հարցում: Այսպես, հարցազրույցներին մասնակցած լրագրողը նշեց, որ կառավարությունը երբեմն ընտրովի է մոտենում լրատվամիջոցների հետ իր փոխգործակցությանը:²⁵ Այս հանձնառությունը կարող է օգնել կառավարությանը լրատվամիջոցների ավելի հետևողական և արդար ներգրավման հարցում:

Վարչապետի աշխատակազմում նախատեսվող նոր ստորաբաժանումը կարող է ապահովել այդքան անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգումն ու աջակցությունը պետական մարմինների կողմից հանրային քննարկումներ իրականացնելու համար: Այն կարող է վերագործարկել հանրային մասնակցության առկա և հաճախ չկիրառվող կառուցակարգերը և ներդնել այլընտրանքային գործիքներ՝ հիմնված որոշակի սոցիալական խմբերի կարիքների վրա:

Իրականացման համար հնարավորություններ, մարտահրավերներ և առաջարկներ

Քաղաքացիական հասարակության կարծիքով՝ սահմանափակ կարողությունները խոչընդոտում են հանրության հետ կառավարության արդյունավետ հաղորդակցությունն ու հանրային մասնակցությունը:²⁶ Հետևաբար, անհրաժեշտ է յուրաքանչյուր պետական մարմնում զարգացնել համապատասխան կարողությունները և ապահովել բավարար մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև զարգացնել հաղորդակցման հմտությունները պետական կառավարման համակարգում: Մասնակցությունն ու հաղորդակցությունը

ԱՀՄ Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024
Հանրային քննարկման համար հասանելի տարբերակ. մեջբերումներն արգելվում են

համակարգող ապագա ստորաբաժանումը ևս պետք է համալրվի անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսներով, այդ թվում՝ տարբեր շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցման հարցում հմուտ փորձագետներով:

Հնարավոր այս խնդիրների հաղթահարման համար ԱՀՄ-ն առաջարկում է հետևյալը քայլերը.

- **Օգտագործել քաղաքականություններն ու ընթացակարգերը՝ բարելավելու հանրային հաղորդակցությունը տեղական ինքնակառավարման մարմիններում:**
Կառավարության ներկայացուցչի կարծիքով՝ նախատեսվող քաղաքականությունն ու ընթացակարգերը տեղական ինքնակառավարման մարմինների համար պարտադիր բնույթ չեն կրելու:²⁷ Վարչապետի աշխատակազմը կարող է խրախուսել տեղական ինքնակառավարման մարմիններում հաղորդակցման քաղաքականության և ընթացակարգերի ներդրումը: Բացի այդ, հանրային մասնակցության մեթոդաբանությունը կարող է օգտագործվել բաց, թափանցիկ և մասնակցային հանրային քննարկումներ կազմակերպելու վերաբերյալ Երևանի ԲԿԳ տեղական գործողությունների (2023–2024) ծրագրի առաջին հանձնառության իրականացման համար:²⁸
- **Հստակեցնել օրենսդրական միջոցառումների շրջանակը՝ քաղաքականություններն ու ընթացակարգերը պարտադիր դարձնելով բոլոր պետական մարմինների համար և ներառելով մշտադիտարկման միջոցառումներ:** Կառավարության ներկայացուցչի խոսքով՝ հաղորդակցության քաղաքականություններն ու ընթացակարգերը պարտադիր կլինեն բոլոր պետական մարմինների համար: Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել նախատեսվող օրենսդրական շրջանակը՝ քաղաքականությունների ու ընթացակարգերի իրականացումն ապահովելու նպատակով: Ավելին, հանձնառությունը չի հստակեցնում քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մշտադիտարկման մեխանիզմները: Իրականացման փուլում Վարչապետի աշխատակազմը կարող է հստակեցնել ընթացակարգերի մշտադիտարկման մոտեցումը՝ հավանաբար ներգրավելով քաղաքացիական հասարակությանը: Լավագույն տարբերակը կլինի, եթե մշտադիտարկման միջոցառումներն ուղղակիորեն ներառվեն համապատասխան ընթացակարգերում:
- **Ներգրավել պետական մարմիններին և քաղաքացիական հասարակությանը հաղորդակցության քաղաքականության և ընթացակարգերի մշակման գործընթացներում:** Կարևոր է, որ պետական մարմինների հանրային կապերի և հաղորդակցության ստորաբաժանումները և քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերը մասնակցեն ռազմավարության մշակմանը՝ սեփականատիրական պատասխանատվության առաջացման և արդյունավետ իրականացման նպատակով:
- Հիմք ընդունելով ՔՀԿ-ների հաշվետվություններում ներկայացված առաջարկներն ու շահագրգիռ կողմերի հարցազրույցները՝ հաղորդակցության ռազմավարությունը կարող է ներառել
 - պետական քաղաքականության և բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ,

ԱՀՄ Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024
Հանրային քննարկման համար հասանելի տարբերակ. մեջբերումներն արգելվում են

- հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության և փաստաթղթերի հրապարակում պաշտոնական կայքերում՝ օգտատերերի համար մատչելի ձևաչափով,
 - նպատակային հաղորդագրություններ և միջոցառումներ տարբեր սոցիալական խմբերի համար, ներառյալ անբարենպաստ վիճակում գտնվող և խոցելի խմբերը,
 - հաշմանդամություն ունեցող անձանց համար պաշտոնական կայքերի հասանելիության ապահովում,
 - տեղեկատվության տարածման համար էլեկտրոնային հաղորդակցության նոր գործիքների կիրառում, միջգերատեսչական և ներքին հաղորդակցման ուղիների ամրապնդում, հանրային կանխագիշ հաղորդակցության և մասնակցության ապահովման աշխատանքներ իրականացնող հատուկ անձնակազմի նշանակում և կառավարության նկատմամբ վստահության բարձրացման նպատակով հաղորդակցության ռազմավարության խթանում:
- **Հստակեցնել կեղծ կամ ապակողմնորոշ տեղեկատվության տարածումը կանխարգելիչ միջոցառումների շրջանակը:** Հանձնառությունը նախատեսում է համապատասխան պետական արձագանքի միջոցառումների ներդրում՝ ապակողմնորոշ և կեղծ տեղեկատվության տարածումը կանխարգելելու նպատակով, սակայն այս միջոցառումները դեռևս հստակեցված չեն: Կառավարության քաղաքականության նկատմամբ հանրային վստահության ամրապնդման նպատակով այս միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել թափանցիկ և մասնակցային ձևաչափով:

Հանձնառություն 5. Մասնակցային բյուջետավորում տեղական մակարդակում

Պատասխանատու մարմին՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Հանձնառության ամբողջական նկարագիրը տե՛ս՝ Հայաստանի 2022-2024 թթ. գործողությունների ծրագրի Հանձնառություն 5-ը՝ [այստեղ](#):

Համատեքստ և նպատակներ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը նախատեսում է, որ տեղական իշխանությունները հանրային քննարկումներ անցկացնեն իրենց համայնքի տարեկան բյուջեի վերաբերյալ՝ մինչև այն հաստատելը: Այնուամենայնիվ, տեղական իշխանությունները հաճախ այդ քննարկումները ձևական են կազմակերպում՝ ներգրավելով համայնքային ծառայողներին և նրանց հարազատներին, որպեսզի քննարկումը կայացած համարվի, իսկ երբեմն էլ ընդհանրապես քննարկումներ չեն կազմակերպում:²⁹ Մասնակցության բացակայությունը պայմանավորված է նաև համայնքների փոքր բյուջեով և նախատեսված հատկացումների փոփոխման ցածր հավանականությամբ:³⁰ Միևնույն ժամանակ, մասնակցության բազմաթիվ հաջողված դեպքեր կան այն համայնքներում, որտեղ բյուջեն համեմատաբար ավելի մեծ է, հատկապես այն համայնքներում, որտեղ ակտիվ ՔՀԿ-ներ կան, իսկ համայնքների ղեկավարները բաց են քաղաքացիական խմբերի հետ համագործակցության համար:³¹

Այս հանձնառությունը նախատեսում է համայնքի բյուջեից որոշակի գումար հատկացնել քաղաքացիների կողմից առաջարկված և տեղի բնակչության հավանությանն արժանացած

ծրագրերին: Այն կփորձարկվի երեք համայնքում՝ Աբովյանում, Արմավիրում և Աշտարակում: Հանձնառությունը առաջարկվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից: Դռնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորված ծրագրերի շրջանակում մասնակցային բյուջետավորման փորձ ունեցող և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցող ՔՀԿ-ները համարում են, որ մասնակցային բյուջետավորումն արդյունավետ կարող է լինել որոշումների կայացման տեղական գործընթացներում մասնակցությունը խրախուսելու համար:³² Ինչպես տեղական կառավարման վերաբերյալ ԲԿԳ նախորդ հանձնառությունների դեպքում, այս հանձնառության իրականացմանը ևս աջակցում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը:³³ Պիլոտային փուլում գտնվող համայնքներից մեկը՝ Արմավիրը, մասնակցային բյուջետավորմանը վերաբերող հանձնառությունը սահմանել է նաև իր տեղական ԲԿԳ գործողությունների ծրագրում:³⁴ Որպես մեկնարկային քայլ՝ հանձնառությունը նախատեսում է մշակել մասնակցային բյուջետավորման ներդրման ուղեցույցներ և գործիքակազմ, որոնք կարող են կիրառվել ցանկացած համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից: Գործողությունների ծրագրի համաձայն՝ հանձնառության շրջանակներում կիրականացվի նաև մասնակցային հնարավորությունների և առավելությունների վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացում:

Այս հանձնառությունը կխթանի քաղաքացիական մասնակցությունը՝ խթանելով հանրության հետաքրքրությունը բյուջեի մշակման գործընթացի նկատմամբ և ընդլայնելով համայնքային ծրագրերում քաղաքացիների՝ մասնակցություն ունենալու հնարավորությունները:

Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր

Հայաստանում տեղական ինքնակառավարման գործընթացում հանրային մասնակցության ցուցանիշը բավականին ցածր է, ինչը տեղական ինքնակառավարման ինստիտուտի առանցքային մարտահրավերներից է՝ ավագանու թույլ դերի, տեղական համայնքների հարկաբյուջետային ինքնավարության բացակայության և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների սահմանափակ լինելու հետ մեկտեղ:³⁵ Մասնակցային բյուջետավորման փորձարկման միջոցով այս հանձնառությունը կարող է օգնել տեղական ինքնակառավարման մարմիններին և համայնքների ղեկավարներին՝ բյուջետավորման գործընթացում հանրության ակտիվ ներգրավման գործում: Մա կարող է բարձրացնել տեղական բյուջետավորման նկատմամբ հանրային հետաքրքրությունը, հատկապես եթե ներկայացված առաջարկները քաղաքացիների քվեարկությունից հետո ուղղակիորեն ներառվեն բյուջեում: Ավելին, քաղաքացիների առաջարկների ներառումը իրենց համայնքի բյուջեում կարող է նպաստել տեղի բնակչության հրատապ սոցիալական կամ տնտեսական կարիքների հաղթահարմանը:

Այս հանձնառությունն ունի արդյունքին միտված չափավոր ներուժ: Մասնակցային բյուջետավորման գործընթացի ուղեցույցներն ու գործիքակազմը արժեքավոր ռեսուրսներ են, սակայն դրանց օգտագործումը հայեցողական սկզբունքով է լինելու: Այնուամենայնիվ, ուղեցույցները և գործիքակազմը (ինչպես նաև համայնքապետարանների կայքերում այնպիսի տեխնիկական կարգավորումները, որոնք թույլ կտան քաղաքացիներին քվեարկել առաջարկների օգտին) հասանելի կլինեն Հայաստանի բոլոր համայնքների համար:³⁶ Այսինքն, այլ շահագրգիռ համայնքներ ևս կարող են կիրառել այս ռեսուրսներն իրենց մասնակցային բյուջետավորման համար: Հանձնառությունը չի հստակեցնում մասնակցային բյուջետավորման համար երեք համայնքապետարանների կողմից տրամադրվող գումարի

ԱՀՄ Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024
Հանրային քննարկման համար հասանելի տարբերակ. մեջբերումներն արգելվում են

չափը: Մակայն Արմավիրի տեղական ԲԿԳ գործողությունների ծրագրով նախատեսված է, որ համայնքն իր 2023 թվականի բյուջեում մասնակցային բյուջետավորման համար հատկացնելու է 1 մլն դրամ (մոտ 2500 ԱՄՆ դոլար), որը կազմում է համայնքային բյուջեի մոտ 0.05 տոկոսը:

Տեղական բյուջետավորման գործընթացներում հանրության շրջանում հետաքրքրության և մասնակցության աճին զուգընթաց՝ հանձնառությունը կարող է օգնել տեղական ինքնակառավարման մարմիններին քաղաքացիների շրջանում խթանել համայնքապետարանների կայքերի ու հանրային մասնակցության հասանելի հնարավորությունների օգտագործումը: Սա իր հերթին կարող է դրդել տեղական ինքնակառավարման մարմիններին ավելի շատ տեղեկատվություն հրապարակել քաղաքացիների համար իրենց կայքերում: Ավելին, իրականացման գործընթացում ներգրավված շահագրգիռ կողմերը նշում են, որ մասնակցային բյուջետավորման տեխնիկական գործիքները կարող են նոր հնարավորություններ ստեղծել այլ մասնակցային նախաձեռնությունների համար: Դա կարող է լինել կառավարությանը ներկայացվող սուբվենցիոն նախագծերի ընտրությունը, բյուջեի հոդվածների վերաբերյալ քաղաքացիների արձագանքի հավաքագրումը և համայնքապետարանի կողմից առաջարկվող այլ նախաձեռնություններ, ինչպես նաև քաղաքացիների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարձրացրած համայնքային խնդիրների շուրջ քննարկումներ կազմակերպելը:³⁷

Իրականացման համար հնարավորություններ, մարտահրավերներ և առաջարկներ

Մասնակցային բյուջետավորման հաջողությունը որոշ չափով պայմանավորված է հատկացված միջոցների ծավալով ու ճկունության բարձր ցուցանիշով, որն օգնում է բովանդակալից մասնակցության համար բավարար խթաններ և զգալի ազդեցություն ապահովել:³⁸ Կարևոր է նաև այն, որ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները ժամանակին ապահովեն համատեղ ընդունված առաջարկների իրականացումը: Սա կարող է բարձրացնել հանրային ծախսերի վրա ազդելու իրենց կարողության նկատմամբ քաղաքացիների վստահության մակարդակը և լավ օրինակ ծառայել այլ համայնքների համար, որոնք նախատեսում են նմանատիպ նախաձեռնություններ իրականացնել: Կարևոր կլինի նաև խրախուսել սոցիալական խմբերի լայն շրջանակի մասնակցությունը, որպեսզի մասնակցային բյուջետավորումը այս համայնքներում հովանավորչության նոր ձև չդառնա:

Այս հանձնառության արդյունքների ներուժը բարելավելու համար ԱՀՄ-ն առաջարկում է հետևյալ քայլերը.

- **Թիրախային հաղորդակցության միջոցով բարելավել տեղական բյուջետավորման գործընթացներին մասնակցելու հնարավորությունների մասին հանրային իրազեկվածությունը:** Հանձնառությունը նախատեսում է հանրային իրազեկում, ինչը էական նշանակություն ունի արդյունավետ իրականացման համար: Կարևոր է, որ իրազեկումը չսահմանափակվի համայնքապետարանների կայքերում տեղեկության հրապարակմամբ, քանի որ դա գուցե բավարար չլինի բնակչությանը տեղեկատվությունը հասցնելու համար: Համայնքի «ազդեցիկ մարդկանց» (այսինքն՝ համայնքում հարգանք վայելող և ճանաչված անձանց) հետ թիրախային հաղորդակցությունը, տեղական ՔՀԿ-ների և բնակիչների հետ դեմ առ դեմ

հանդիպումները (օրինակ՝ համայնքային ժողովները) կարող են ամրապնդել հանրային մասնակցության մոտիվացիան: Տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստումներն ու մենթորությունը ևս կարող են ապահովել համայնքներում հանձնառության իրականացման կարողությունների զարգացումը: «People Powered» կազմակերպությունը պաշտոնյաների, կառավարության աշխատակազմի և հաստատությունների համար մշակել է մասնակցային բյուջետավորման հաջող գործընթաց սկսելու գործիքակազմ:³⁹

- **Ապահովել տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցային բյուջետավորման գործընթացների լիարժեք թափանցիկությունը:** ՏԿարևոր է, որ համայնքները հստակ ներկայացնեն քաղաքացիական նախաձեռնությունների ընտրության գործընթացը և քաղաքացիների առաջարկների համար հատկացվող միջոցները: Օրինակ՝ տեղական ԲԿԳ 2018–2020 թթ. գործողությունների ծրագրում մասնակցային բյուջետավորման հանձնառության իրականացման համար Սան Պաուլոն (Բրազիլիա) կիրառել է քաղաքային իշխանությունների հարթակը՝ ներկայացված առաջարկների, ստացված ձայների քանակի և ընդունված առաջարկների վերաբերյալ տեղեկատվության գրանցման համար:⁴⁰ Կարևոր է նաև քաղաքացիների առաջարկներին հիմնավորված պատասխան տալ: Լավ օրինակ է Բաթումիի քաղաքապետարանի մասնակցային բյուջետավորման հանձնառությունը Վրաստանի 2018-2019 թթ. գործողությունների ծրագրում:⁴¹ Քաղաքապետարանի մասնակցային բյուջետավորման կայքն ունի հատուկ բաժին, որտեղ հրապարակվում են բոլոր ներկայացված, հաստատված և մերժված առաջարկները:⁴² «Մերժված առաջարկներ» բաժնում քաղաքապետարանը տրամադրում է առաջարկի մերժման պատճառները, օրինակ՝ ինչու այն իրագործելի չէր կամ դուրս էր քաղաքապետարանի իրավասությունից:
- **Հրապարակել պարզեցված բյուջետային փաստաթղթեր և տեղեկատվություն՝ բյուջետային գործընթացներում հանրային ներգրավվածության բարելավման նպատակով:** Պարզեցված բյուջեները (օրինակ՝ «Քաղաքացու բյուջե»), որոշումների ընթացքը ներկայացնող գծապատկերները և օգտագործողների համար մատչելի այլ նյութերը կարող են մեծացնել տեղական բյուջետավորման նկատմամբ հետաքրքրությունը և բարելավել բյուջեի կատարման նկատմամբ հանրային վերահսկողությունը: Համայնքային բյուջեների հրապարակումը բաց տվյալների ձևաչափով (որը նախատեսված է Գյումրիի և Վանաձորի տեղական ԲԿԳ գործողությունների համատեղ ծրագրով⁴³) կարող է նաև բարելավել քաղաքացիների, տեղական լրատվամիջոցների և ՔՀԿ-ների բյուջետային տեղեկատվության հասանելիությունը: Հավասար մասնակցությունն ապահովելու նպատակով տեղական համայնքները բյուջեի մասին տեղեկատվություն տրամադրելիս, առաջարկներ հավաքագրելիս և կատարման մասին տեղեկացնելիս պետք է հաշվի առնեն առանձին խմբերի, օրինակ՝ տարեցների կամ հաշմանդամների կարիքները:
- **Հնարավորության դեպքում դիտարկել տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների համար մասնակցային բյուջետավորման վերաբերյալ պարտադիր կարգավորման ընդունումը:** Նման կարգավորումները կարելի է ներառել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի առաջիկա փոփոխություններում: Սրա շնորհիվ հանձնառությունը կարող է հանգեցնել կառավարման պրակտիկայի կայուն փոփոխության՝ շարունակելով մասնակցային բյուջետավորումը երկամյա

ԱՀՄ Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024
Հանրային քննարկման համար հասանելի տարբերակ. մեջբերումներն արգելվում են

գործողությունների ծրագրի շրջանակներից դուրս: Օրինակ՝ համաձայն 2020-2022 թթ. գործողությունների իր ծրագրի՝ Կոտ դ'Իվուարը հանձն առավ երկրի բոլոր բնակավայրերում մասնակցային բյուջետավորման համար իրավական և կարգավորող շրջանակ մշակել:⁴⁴

Խրախուսել այն համայնքների ներգրավվածությունը, որոնք ներառված չեն փորձարկման գործընթացում և նպաստել ուղեցույցների և գործիքակազմի կիրառմանը՝ համայնքներում մասնակցային բյուջետավորման մոտեցումների ստանդարտացման նպատակով: Պիլոտային գործընթացում ներգրավված համայնքներից զատ մասնակցային բյուջետավորման ավելի լայն կիրառման նպատակով հարկ է պարաբանել, թե ինչպես կարող են մյուս համայնքներն էլ շահել ուղեցույցի և գործիքակազմի օգտագործումից և ընդլայնել պիլոտային ծրագրի արդյունքները: Օրինակ՝ Ջերմուկի քաղաքապետարանը, թեև ընդգրկված չէ պիլոտային գործընթացում, մասնակցային բյուջետավորում է նախաձեռնել, որի համար հատկացրել է 5 մլն դրամ: Ջերմուկն արդեն ուներ առցանց հարթակի միջոցով համայնքային բյուջեի վերաբերյալ քաղաքացիների կողմից առաջարկներ հավաքագրելու փորձ: Կառավարությունը կարող է աջակցել Ջերմուկին և այլ համայնքներին այս հանձնառության գործիքներն իրենց մասնակցային բյուջետավորման պրակտիկայում ներառելու գործում:

Հանձնառություն 7. Հանրային ծառայողների նվերների ռեեստր

Պատասխանատու մարմին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով,
Արդարադատության նախարարություն

Հանձնառության ամբողջական նկարագիրը տե՛ս Հայաստանի 2022-2024 թթ. գործողությունների ծրագրի Հանձնառություն 7-ում՝ [այստեղ](#).

Համատեքստ և նպատակներ

2018 թվականի «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքն արգելում է հանրային ծառայողների կողմից իրենց պաշտոնական լիազորությունների կատարման ընթացքում նվերներ ընդունելը՝ որոշ բացառություններով (օրինակ՝ թույլատրելի են պաշտոնական այցերի կամ հանրային միջոցառումների ժամանակ ընծայված նվերները): Համաձայն օրենքի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են նվերները փոխանցել կառավարությանը, եթե դրանց արժեքը գերազանցում է 60000 դրամը (մոտ 150 ԱՄՆ դոլար):⁴⁵ Այնուամենայնիվ նվերների հանձնման և հայտարարագրման ընթացակարգերի վերաբերյալ որևէ կարգավորում չկա: Արդարադատության նախարարության կողմից առաջարկված այս հանձնառությունը նպատակ ունի նվերների հաշվառման և փոխանցման կանոնակարգեր ընդունել, վերահսկողության համար պատասխանատու մարմին սահմանել և ստեղծել նվերների հայտարարագրերի և փոխանցումների հանրամատչելի թվայնացված ռեեստր: Հայաստանի գործողությունների նախորդ ծրագրերը ներառում էին բաց տվյալների ձևաչափով գույքի և եկամուտների հայտարարագրերի ռեեստր ստեղծելու հանձնառություններ: Շահագրգիռ կողմերը կարծում են, որ ներկայիս հանձնառությունն անհրաժեշտ է նվերների հետ կապված իրավական կարգավորումները կիրառելու և հակակոռուպցիոն ոլորտի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների առաջարկներին համապատասխանելու նպատակով:⁴⁶ 2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսում էր ստեղծել նվերների ռեեստր, սակայն այս գործողությունը չիրականացվեց:⁴⁷

Ռեեստրը հնարավորություն կտա մշտադիտարկում իրականացնել և ազդարարել չհաշվառված կամ իրավական կարգավորումներին հակասող նվերների մասին՝ դրանով իսկ նպաստելով թափանցիկությանը: Բացի այդ, «Ազդարարման համակարգի մասին» օրենքը⁴⁸ հանրությանը տրամադրում է կոռուպցիայի և բարեվարքության խախտումների մասին հաղորդելու մի շարք հնարավորություններ, այդ թվում՝ ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում անանուն եղանակով հաղորդում ներկայացնելը:⁴⁹ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) կվերահսկի ռեեստրը և վարույթ կհարուցի իր ստացած հաղորդումների հիման վրա: Դա ներառում է օրենքով նախատեսված կարգապահական և վարչական տույժերի կիրառումը և (կամ) քրեական իրավախախտման դեպքում՝ վարույթը իրավապահ մարմիններին հանձնելը:⁵⁰ Այսպիսով, հանձնառությունը կարող է նպաստել հանրային հաշվետվողականությանը՝ խթանելով հանրային վերահսկողության առկա կառուցակարգերի կիրառումը: Որպես կանոն, ԿԿՀ-ն իր կայքում հրապարակում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նկատմամբ հարուցված վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը:

Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր

Թեև մինչ այս հանձնառությունը օրենքը հիմնականում արգելում էր հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից իրենց պաշտոնեական լիազորությունների կատարման ընթացքում նվերներ ընդունելը, «նվեր» եզրույթն իրավական կարգավորումներում պատշաճ ձևակերպված չէր: Ավելին, սահմանված չէին պետությանը նվերը փոխանցելու ընթացակարգերը: Որևէ հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելը կոռուպցիոն ռիսկեր է պարունակում, քանի որ նվերները կարող են տրվել որևէ արտոնության կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձի իրավասությունների շրջանակում գտնվող՝ նվիրատուի օգտին որևէ որոշման դիմաց (կամ դրա ակնկալիքով): Այս հանձնառության արդյունքում կհստակեցվի նվերների ստացման, հաշվառման և փոխանցման քաղաքականությունը, կսահմանվի վերահսկողության համար պատասխանատու մարմին և կստեղծվի նվերների ռեեստր: Հանրությանը, լրատվամիջոցներին և քաղաքացիական հասարակությանը հնարավորություն կընձեռվի ռեեստրը օգտագործել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ընդունված նվերների վերաբերյալ տեղեկատվության վերլուծության և հնարավոր խախտումների մասին կառավարությանը հաղորդելու համար:

ԱՀՄ-ն արդյունքին միտված ներուժը գնահատել է չափավոր, քանի որ ըստ շահագրգիռ կողմերի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք միևնույնն է կարող են թաքցնել իրենց ստացած անթույլատրելի նվերները, կամ ընդհանրապես չգրանցել դրանք: Նվերների հայտարարագրումը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց էթիկական պարտականություններից է, և դրա կատարումը կարող է վերահսկվել նրանց վերադասների, գործընկերների և պետական գերատեսչությունների՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից:⁵¹

Այնուամենայնիվ, կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում ռեեստրը կարող է կանխարգելիչ ազդեցություն ունենալ նվերների հանձնման և ընդունման վրա: Հայաստանում տարածված է այն պրակտիկան, երբ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք նվերներ են ստանում ծառայություններ մատուցելու համար, իսկ հանրությունն ու պաշտոնյաները հաճախ նվերներն ընկալում են որպես երախտագիտության նշան, այլ ոչ թե որպես կաշառք: Նվերների հայտարարագրման ընթացակարգը կարող է փոխել նվերներ ստանալն ընդունված

պրակտիկա համարող պաշտոնյաների մտածելակերպը և բարելավել հանրության կողմից նվերների ընկալումը՝ որպես կոռուպցիոն ռիսկ:⁵²

ՔՀԿ-ները մտահոգ են, որ ռեեստրում ներառված տեղեկատվությունը կարող է սահմանափակվել միայն արարողակարգային նվերներով (օրինակ՝ հուշանվերներով): Թեև շահերի բախման դեպքերը և բարձրաստիճան պաշտոնյաների կողմից ընդունված նվերներն արժանացել են լրատվամիջոցների ուշադրությանը, դրանց վերաբերյալ որևէ արդյունավետ քննություն չի իրականացվել: Հարցված ՔՀԿ-ները թերահավատ են, որ ռեեստրն էական ազդեցություն կունենա կոռուպցիայի դեմ պայքարի գործում՝ հաշվի առնելով, որ շատ նվերներ կարող են համարվել «անձնական» (այն է՝ կապված չլինեն պաշտոնական պարտականությունների հետ) և, հետևաբար, ենթակա չլինեն հայտարարագրման:⁵³ «Հյուրասիրությունը» ներառված է թույլատրելի նվերների ցանկում, թեև որոշ դեպքերում այն ևս կարող է կոռուպցիոն ռիսկեր պարունակել:⁵⁴ Հաշվետվողականության բարելավումը մեծապես կախված է նաև հանրային վերահսկողության աստիճանից: «Ազդարարման համակարգի մասին» օրենքում կատարված վերջին փոփոխությունները թույլ են տալիս խախտումների մասին հաղորդում տալ նաև հանրային միջոցներով: Սա նշանակում է, որ լրատվամիջոցների հրապարակումները, այդ թվում՝ նվերների առնչությամբ, այժմ կարող են լրացուցիչ հիմք ծառայել վարույթ սկսելու համար:⁵⁵

Իրականացման հնարավորություններ, մարտահրավերներ և առաջարկներ

Այս հանձնառության հիմնական մարտահրավերն այն է, որ գործնականում գուցե փոքր թվով հանրային պաշտոն զբաղեցնող անձինք հայտարարագրեն և հաշվառեն իրենց նվերները: Ռեեստրն արդյունավետ կլինի միայն այն դեպքում, երբ կառավարությունն ապահովի ընդունված կանոնակարգերի իրականացումն ու վերահսկողությունը:

Իրականացման ընթացքում այս մարտահրավերները հաղթահարելու համար ԱՀՄ-ն առաջարկում է հետևյալ քայլերը.

- **Ընդլայնել օրենքով հայտարարագրման ենթակա նվերների շրջանակը:** Շահագրգիռ կողմերը խնդրահարույց են համարում «անձնական» նվերների տարբերակումը «ծառայողական պարտականությունների իրականացման հետ կապված» նվերներից: ՔՀԿ-ներն առաջարկում են սահմանել որոշակի շեմն անցնող բոլոր նվերների հայտարարագրման կարգ կամ այդ նվերները ներառել գույքի և եկամուտների հայտարարագրերում, ներառյալ նվերի գնահատված արժեքը և նվիրատու անձի/կազմակերպության մասին տեղեկատվությունը: Սա հնարավորություն կընձեռնի վերահսկել թանկարժեք նվերների աղբյուրները և շահերի բախումը: Թեև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք հայտարարագրեն իրենց գույքն ու ֆինանսական միջոցները գույքի և եկամուտների հայտարարագրերում, պարտադիր է միայն անշարժ գույքի, փոխադրամիջոցների և արժեթղթերի հայտարարագրումը, իսկ գույքի այլ տեսակների համար հայտարարագրումը պարտադիր է այն դեպքում, եթե դրանց արժեքը գերազանցում է չորս միլիոն դրամը: Բացի այդ, պարտադիր չէ նշել նվիրատու անձին կամ կազմակերպությանը:
- **Նվերների ռեեստրի կայքէջը փոխգործելի դարձնել գույքի հայտարարագրերի ռեեստրի կայքէջի հետ:** Կառավարությունը նախատեսում է ունենալ նվերների և գույքի ու եկամուտների հայտարարագրերի առանձին ռեեստրներ, քանի որ այդ

ռեեստրներում տվյալները տարբեր ձևաչափով են մուտքագրվում (օրինակ՝ նվերների ռեեստրում ներառվելու են նվերների լուսանկարները) և ունեն թարմացումների տարբեր ժամկետներ (հայտարարագրերը հրապարակվում են տարին մեկ անգամ, իսկ նվերների ռեեստրը պարբերաբար պետք է թարմացվի): Այնուամենայնիվ, կառավարությունը նախատեսում է այս համակարգերը փոխգործելի դարձնել՝ նվերների ռեեստրը ստեղծելուց հետո խաչաձև ստուգումը հնարավոր դարձնելու նպատակով: Խաչաձև ստուգումը դուրացնելու նպատակով ԱՀՄ-ն առաջարկում է յուրաքանչյուր պաշտոնյայի գույքի հայտարարագրերում ներառել նվերների ռեեստրի էջի՝ նույն պաշտոնյայի անունով որոնման արդյունքների հիպերհղումը:

- **Վերապատրաստել հանրային ծառայողներին նվերների հայտարարագրման և հաշվառման ընթացակարգերի վերաբերյալ, բարելավել հանրության իրազեկվածությունը նվերների հետ կապված ռեեստրի վերաբերյալ և խթանել ռեեստրի կիրառումը:** Օրենսդրական դրույթները խախտելու համար վարչական և քրեական պատժամիջոցների կիրառումից զատ, անհրաժեշտ է պաշտոնյաների և հանրության շրջանում լայնածավալ իրազեկման միջազատումներ իրականացնել՝ առկա վերաբերմունքն ու սովորույթները փոխելու նպատակով: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը և Արդարադատության նախարարությունը կարող են վերապատրաստման ծրագիր մշակել հանրային ծառայողների շրջանում նվերների հայտարարագրման և հաշվառման, ինչպես նաև նվերները կառավարությանը փոխանցելու ընթացակարգերի վերաբերյալ, որպեսզի ապահովեն լայնածավալ իրազեկումը ու կարգավորումների կատարումը: Ցանկալի է, որ համապատասխան ուղեցույցներն ու վերապատրաստումները ներառվեն նոր հանրային ծառայողների ընդունման գործընթացում:

Հանձնառություն 8. Էլեկտրոնային գնումների համապարփակ համակարգ

Պատասխանատու մարմին՝ Ֆինանսների նախարարություն

Հանձնառության ամբողջական նկարագիրը տե՛ս Հայաստանի 2022-2024 թթ. գործողությունների ծրագրի Հանձնառություն 8-ում՝ [այստեղ](#).

Համատեքստ և նպատակներ

Հայաստանն ունի պետական գնումներին վերաբերող մի շարք հարթակներ: Դրանցից մեկը [armeps.am](#)-ն է, որը գործարկվել է 2011 թվականին՝ գնման մրցույթների, գնանշման հարցումների և մեկ աղբյուրից գնման ընթացակարգերը առցանց կազմակերպելու համար:⁵⁶ Armeps.am-ի գնումների պլանավորման և պայմանագրերի կառավարման մոդուլը (PPCM) հրապարակում է գնումների պլանները, պայմանագրերը և հարակից փաստաթղթերը՝ հնարավորություն տալով որոնումն իրականացնել ըստ պայմանագրի տեսակի ու առարկայի, պատվիրատուի, մատակարարի ու ժամանակահատվածի և տվյալներ ներբեռնել CSV և Excel ձևաչափով:⁵⁷ Ֆինանսների նախարարության [www.procurement.am](#) հարթակը ծառայում է որպես գնումների մրցույթի հրավերների և պայմանագրերի վերաբերյալ ծանուցումների տեղեկագիր: Այնտեղ հրապարակվում են նաև մրցույթների մասնակիցների իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերը:⁵⁸ Գործում է նաև Էլեկտրոնային աճուրդի միջոցով գնումներին մասնակցելու համակարգ:⁵⁹

Այս հանձնառությունը նախատեսում է միավորել վերը նշված համակարգերը մեկ հարթակում, որտեղ գնումների մասին տեղեկատվությունը կհրապարակվի անվճար և

ինքնաշխատ եղանակով: Բացի այդ, համակարգը կապահովի իրական շահառուների ռեեստրի հետ փոխգործելիությունը՝ հնարավորություն տալով ռեեստրից ավտոմատացված եղանակով դուրս բերել իրական շահառուների մասին տվյալները: Հանձնառությունն առաջարկվել է Ֆինանսների նախարարության և «ՀԿ կենտրոն» ՀԿ-ի կողմից, իսկ իրական շահառուների ռեեստրի հետ փոխգործելիությունն ավելացվել է Արդարադատության նախարարության առաջարկով՝ միտված իրական շահառուների հայտարարագրման համակարգի գործարկմանը, քանի որ Հայաստանը իրական շահառուների հայտարարագրման պարտադիր պահանջ է ներդրել բոլոր իրավաբանական անձանց համար:⁶⁰

Գնումների փաստաթղթերի հրապարակման ավտոմատացման անհրաժեշտությունը մի քանի տարի եղել է կառավարության և քաղաքացիական հասարակության օրակարգում:⁶¹ Հայաստանը գործողությունների նախորդ ծրագրերում իրականացրել է գնումների թափանցիկության և բյուջետային ծախսերի հետ կապված միջոցառումներ՝ միջազգային կազմակերպությունների առաջարկները հասցեագրելու և միջազգային չափորոշիչների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:⁶² Այնուամենայնիվ, ՏՀԶԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի մշտադիտարկման 2022 թվականի զեկույցում նշվում են պետական գնումների ոլորտում շարունակաբար առկա կոռուպցիոն ռիսկերը, ինչպիսիք են, օրինակ՝ կառավարության հետ առնչություն ունեցող ընկերություններին պայմանագրերի շնորհումը և մեկ աղբյուրից գնումների մեծ ծավալը:⁶³

Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր

ՔՀԿ-ները և լրագրողները հաճախ հայտնում են պայմանագրային փաստաթղթերի թերի լինելու դեպքերի մասին, ինչը խոչընդոտում է կոռուպցիոն ռիսկերի, շահերի բախման դեպքերի կամ ոչ նպատակային ծախսերի բացահայտմանը:⁶⁴ Օրինակ՝ պայմանագրով նախատեսված գումարը կարող է փոխվել պայմանագիրը կնքելուց հետո, սակայն այդ փոփոխությունների մասին որևէ հրապարակում չի լինում, իսկ հավելվածները կարող են անհասանելի լինել կամ պարունակել թերի տեղեկատվություն:⁶⁵ ՔՀԿ-ները նաև նշում են առկա հարթակներում առկա տվյալների սահմանափակ ծավալի և տեխնիկական խնդիրների մասին: Նոր հարթակում տվյալների ավտոմատացված հրապարակումը նվազագույնի կհասցնի մարդկային գործոնը և տեղեկատվության ոչ միտումնավոր քողարկման դեպքերը: Պայմանագրերի վերաբերյալ բոլոր համապատասխան տվյալների, ներառյալ պայմանագրի շնորհմանը նախորդող և հաջորդող փաստաթղթերի համար նախատեսվում է մեքենայական ընթերցման հասանելիություն ապահովել՝ ի տարբերություն նախկինում հաճախ կիրառվող PDF ձևաչափի: Ավելին, պետական գնումների մի մասը դեռևս իրականացվում է թղթային ձևաչափով, սակայն նոր հարթակը հնարավորություն կընձեռնի գնումների գործարքներն իրականացնել էլեկտրոնային եղանակով: Այս փոփոխությունների շնորհիվ գնումների վերաբերյալ ավելի ճշգրիտ տվյալներ կներկայացվեն էլեկտրոնային գնումների պլանավորման և պայմանագրերի կառավարման մոդուլում (PPCM), որը ներկա դրությամբ արտացոլում է գործարքների միայն մի մասը: Եթե նոր հարթակը ամբողջական տեղեկատվություն տրամադրի գնումների պայմանագրերի վերաբերյալ բաց տվյալների ձևաչափով և որոնման ընդլայնված հնարավորություններով, այն հետազոտողներին և լրագրողներին թույլ կտա ավելի քիչ ժամանակ ծախսել տվյալների հավաքագրման վրա՝ պետական ծախսերի արդյունավետությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերը վերլուծելիս:

Մատակարարներին հարթակը տեղեկատվություն կտրամադրի իրենց մասնակցած մրցույթների մասին՝ հնարավորություն ընձեռելով համեմատել իրենց հայտերը հաղթող հայտերի հետ և վերլուծել նմանատիպ մրցույթները՝ նոր հայտերի պլանավորման նպատակով: Կառավարության համար հարթակն ավելի արդյունավետ մշտադիտարկում իրականացնելու և պետական ծախսերը վերահսկելու, ինչպես նաև հետագա մշտադիտարկման կարիք ունեցող պայմանագրերը բացահայտելու հնարավորություն կտա: Այն նաև կօգնի կառավարության կողմից ավելի արդյունավետ պլանավորմանը:

Մրցույթի մասնակիցներից պահանջվող՝ իրական շահառուների մասին հայտարարագրերը հրապարակվում են սկանավորված փաստաթղթերի ձևաչափով, ինչը դժվարացնում է կառավարության և քաղաքացիական հասարակության կողմից դրանց ստուգումը: Բացի այդ, չկան որոնման գոյիչներ, որոնք հնարավորություն կտան օգտատերերին procurement.am հարթակում հեշտությամբ գտնել որևէ ընկերության կամ իրական շահառու հանդիսացող անձի մասին տեղեկատվությունը: Էլեկտրոնային գնումների նոր համակարգի փոխգործելիությունը իրական շահառուների ռեգիստրի հետ կոյուրացնի որոնումը և մեքենայաընթեռնելի տեղեկատվության վերլուծությունը: Այն նաև կարող է ավելի հավաստի տվյալներ տրամադրել իրական շահառուների վերաբերյալ՝ շնորհիվ ռեգիստրում թերի կամ կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում սահմանված պատժամիջոցների: Բոլոր հայտատուների, այդ թվում՝ մերժված հայտերը ներկայացնողների համար իրական շահառուների մեքենայաընթեռնելի տվյալների հասանելիությունը կարող է օգնել օգտատերերին բացահայտել հայտատու ընկերությունների և տվյալ մրցույթը վերահսկող անձանց միջև հնարավոր ստվերային պայմանավորվածությունները:

Հարթակը չի լուծի ոչ մրցութային կարգով իրականացվող գնումների լայն շրջանակի և գնումների համակարգերի այլ խնդիրները, ինչպիսիք են տեղեկատվության չհրապարակման կամ թերի տեղեկատվության հրապարակման համար պատժամիջոցների բացակայությունը և պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների՝ ամբողջությամբ էլեկտրոնային գնումներին անցնելու անբավարար կարողությունները: Բացի այդ, միայն կառավարության համապատասխան որոշման մեջ նշված պետական մարմիններն ու հիմնարկներն են պարտավոր էլեկտրոնային եղանակով իրականացնել բաց գնումների մրցույթները և գնանշման հարցումները:⁶⁶ Էլեկտրոնային գնումների գործարկումը կարող է մարտահրավեր լինել պետական գնումներում ներգրավված սակայն կառավարության այս որոշման մեջ չներառված դերակատարների համար: Երկարաժամկետ կտրվածքով կառավարության նպատակը էլեկտրոնային գնումները «Գնումների մասին» օրենքով սահմանված բոլոր պատվիրատուների համար պարտադիր դարձնել է:⁶⁷ Այնուամենայնիվ, ըստ գործողությունների ծրագրում առկա ձևակերպումների, հանձնառությունը սահմանափակվում է միայն էլեկտրոնային գնումների համակարգը ներդնելու գործողությամբ և չի նախատեսում կազմակերպությունների կողմից գնումները էլեկտրոնային եղանակով իրականացնելու իրավական շրջանակի սահմանում: Հետևաբար, ԱՀՄ-ն այս հանձնառության արդյունքին միտված ներուժը գնահատում է չափավոր՝ ելնելով գործողությունների ծրագրի տեքստից:

Իրականացման հնարավորություններ, մարտահրավերներ և առաջարկներ

Ինչպես նշվեց, երկարաժամկետ նպատակը էլեկտրոնային գնումների նոր համակարգում «Գնումների մասին» օրենքում ամրագրված բոլոր պատվիրատուներին ընդգրկելն է: Այնուամենայնիվ, հանձնառությունը չի ապահովում բոլոր պետական մարմիններին,

ներառյալ՝ կառավարության համապատասխան որոշմամբ չսահմանված պատվիրատուների ներառումը էլեկտրոնային եղանակով գնումներն իրականացնելու և պետական գնումներին առնչվող տեղեկատվությունը հրապարակելու գործընթացներում: Բացի այդ, դեռևս առկա է համայնքների կողմից հարթակի գործարկման, բաց տվյալների ձևաչափի սահմանման և պետական ծառայողների և տվյալների օգտատերերի՝ հարթակից օգտվելու կարողությունների խնդիրը:

Զգալի արդյունքների ապահովման նպատակով ԱՀՄ-ն առաջարկում է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- **Օրենքով սահմանված կարգով ապահովել պետական գնումների մասին տեղեկատվության հրապարակումը և էլեկտրոնային գնումների իրականացումը, ներառյալ՝ տեղական մակարդակում:** Պետական ծախսերի ավելի մեծ թափանցիկության ապահովման նպատակով Հայաստանը պետք է պարտադրի գնումների պայմանագրերի և պայմանագրերի շնորհմանը հաջորդող փաստաթղթերի հրապարակումը ոչ մրցութային ընթացակարգով գնումների դեպքերում և պետական հիմնարկների կողմից գնումների իրականացումը գնումների էլեկտրոնային հարթակի միջոցով: Համապատասխան օրենսդրական փոփոխություններ են անհրաժեշտ, որոնք կապահովեն էլեկտրոնային գնումների հարթակի միջոցով բոլոր պետական գնումների իրականացումը և տեղեկատվության հետագա հրապարակումը՝ չկատարման դեպքում սահմանելով համապատասխան պատժամիջոցներ: Օրինակ, Սլովակիայի Հանրապետությունում սահմանված է, որ եթե գնման պայմանագիրը հրապարակված չէ, ապա այն օրինական ուժի չունի:⁶⁸ Բացի այդ, քաղաքացիական հասարակությունը կարևորում է տեղական մակարդակում գնումների թափանցիկության բարձրացման անհրաժեշտությունը, հատկապես հիմա, երբ համայնքների բյուջետային միջոցները բազմապատկվել են համայնքների՝ վերջերս տեղի ունեցած խոշորացման գործընթացի արդյունքում: Պետական մարմնի ներկայացուցչի խոսքով՝ բոլոր քաղաքային համայնքները պետք է կիրառեն armeps.am-ը՝ իրենց գնումների պայմանագրերը հրապարակելու նպատակով: Սակայն այդ հարթակի նախնական ուսումնասիրությունն ու շահագրգիռ կողմերի արձագանքները ցույց են տալիս, որ տեղական մակարդակով գնումների վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ հասանելի չէ: Հետագայում Հայաստանը կարող է դիտարկել բոլոր համայնքների (ներառյալ՝ համայնքային հիմնարկների) կողմից գնումների իրականացումը նոր հարթակում:
- **Ամբողջապես ներդնել բաց տվյալների չափորոշիչները, մասնավորապես՝ Բաց պայմանագրային տվյալների չափորոշիչը (ԲՊՏՀ) նոր հարթակում:** Կարևոր է, որ ֆայլերի ձևաչափը մեքենայական վերլուծության հնարավորություն ընձեռի: Ֆինանսների նախարարությունը կարող է ուղղորդվել ԲՊՏՀ ուղեցույցով՝ պայմանագրային գործընթացի յուրաքանչյուր փուլում տվյալների և փաստաթղթերի հրապարակման վերաբերյալ միասնական մոդել սահմանելիս:⁶⁹ Ֆինանսների նախարարության ներկայացուցչի խոսքով՝ նախարարությունը նախատեսում է նոր հարթակի տեխնիկական առաջադրանքում ներառել ԲՊՏՀ չափորոշիչները:⁷⁰ Օրինակ՝ իր 2021-2023 թթ. գործողությունների ծրագրի համաձայն Լիստվան ամբողջությամբ ներդնում է ԲՊՏՀ-ը՝ անցում կատարելով գնումների նոր ազգային համակարգին:⁷¹

- **Հարթակում առանձին պայմանագրերի/մրցույթների վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկության կամ խախտումների մասին հաղորդելու հնարավորություն տալ օգտատերերին:** Հայաստանում գործում է էլեկտրոնային փոստով և թեժ գծով ոչ ճշգրիտ տեղեկության և հնարավոր խախտումների մասին հաղորդման հնարավորություն: Ֆինանսների նախարարությունը կարող է էլեկտրոնային գնումների հարթակում ստեղծել նմանատիպ կառուցակարգ, որը կօգնի հանրությանը նմանատիպ տվյալների դեպքում համապատասխան քայլեր ձեռնարկել, օրինակ բողոք ներկայացնել, խախտումների մասին հաղորդել կամ բարելավումներ առաջարկել: Կարևոր է, որ կառավարությունն արձագանքի հանրության առաջարկներին ու բողոքներին և համապատասխան քայլեր ձեռնարկի: Օրինակ, Ուկրաինան իր գործողությունների 2016-2018 թթ. ծրագրում գործարկեց DOZORRO համակարգը, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս ահազանգել ProZorro էլեկտրոնային գնումների համակարգում հայտնաբերված անհամապատասխանությունների և խախտումների մասին:⁷²
- **Հարթակը գործարկելիս խորհրդակցել օգտատերերի (այսինքն՝ քաղաքացիական հասարակության և բիզնեսի) հետ և ապահովել օգտատերերի շրջանում իրազեկվածության բարելավումը և վերապատրաստումը:** Հարթակի տեխնիկական առաջադրանքը մշակելիս անհրաժեշտ է խորհրդակցել քաղաքացիական հասարակության և բիզնեսի շահագրգիռ կողմերի հետ: Սա կօգնի կառավարությանը ներառել համապատասխան առաջարկները և լուծել հարթակի ֆունկցիոնալության և բովանդակության հետ կապված մտահոգությունները: Բացի այդ, տվյալների վերաօգտագործումը խրախուսելու նպատակով կառավարությունը նոր հարթակում տվյալների օգտագործման վերաբերյալ վերապատրաստումներ կարող է անցկացնել շահագրգիռ կողմերի համար: Օրինակ՝ իր 2016-2018 թթ. գործողությունների ծրագրում Մոլդովայի Հանրապետությունը էլեկտրոնային գնումների MTender համակարգի գործարկման վերաբերյալ վերապատրաստումներ է անցկացրել փոքր և միջին ձեռնարկությունների, քաղաքացիական հասարակության և ծրագրակազմեր մշակողների շրջանում:⁷³

Այլ հանձնառություններ

Այն հանձնառությունները, որոնք ԱՀՄ-ն չի բնորոշվել որպես խոստումնալից հանձնառություններ, ներկայացված են ստորև: Սույն ուսումնասիրությունը ներառում է մի շարք առաջարկներ, որոնք կնպաստեն համապատասխան տեղեկությունների և գիտելիքների ստացմանը և այս հանձնառությունների իրականացմանը:

Հանձնառություն 3-ը նախատեսում է տեղեկատվության ազատության ոլորտում ինքնագնահատման համակարգի ներդրում: Ընտրված պետական մարմինները փորձնական ձևաչափով կկիրառեն ինքնագնահատման մեթոդաբանությունը՝ իրենց գերատեսչությունում տեղեկատվության ազատության իրավունքի ապահովումը գնահատելու և արդյունքները հրապարակելու նպատակով: Քաղաքացիական հասարակությունը նշել է տեղեկատվության ազատության կանոնակարգերին հետևելու վերաբերյալ կառավարության համակարգված հաշվետվությունների բացակայությունը, և հաճախ բացը լրացվում է ՔՀԿ զեկույցների միջոցով:⁷⁴ Այս հանձնառությունը առաջարկված ՔՀԿ ներկայացուցիչն ընդգծել է, որ թեև ինքնագնահատումները կարող են ճշգրիտ չլինել, դրանք թույլ կտան պատկերացում կազմել պետական գերատեսչությունների կատարողականի մասին, կնվազեցնեն տեղեկատվության

ազատության իրավունքի խախտումները, հնարավորություն կտան համեմատականներ անցկացնել քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող մշտադիտարկման արդյունքների հետ և որպես ելակետ կծառայեն հետագա քննարկումների համար:⁷⁵ Հանձնառությունը վերաբերում է միայն ինքնագնահատման փորձական իրականացմանը, սակայն չի նշվում պիլոտային ծրագրում ներառված գերատեսչությունների թիվը: ԱՀՄ-ն պիլոտային ծրագրին մասնակցող գերատեսչություններին և քաղաքացիական հասարակությանն առաջարկում է զարգացնել մշտադիտարկումն իրականացնող հանրային ծառայողների կարողությունները: Որպես հաջորդ քայլ՝ ԱՀՄ-ն առաջարկում է պետական կառավարման բոլոր մարմինների կողմից տեղեկատվության հարցումների պատասխանների վերաբերյալ ամփոփ վիճակագրություն հրապարակել՝ ներառելով հարցում ուղարկողների բնութագիրը, հարցումների թեմաները և ուշացած պատասխանների մասին տվյալները: Կարևոր է, որ կառավարությունը թափանցիկ ու պատշաճ պատժամիջոցներ և ուղղիչ գործողություններ ձեռնարկի այն պետական կառույցների դեմ, որոնք հետևողական կերպով չեն կատարում տեղեկատվության ազատության հետ կապված պարտավորությունները:

Հանձնառություն 4-ը նպատակ ունի հասցեագրել պետական բյուջեի մշակման գործընթացում հանրության անբավարար մասնակցության խնդիրը:⁷⁶ Ներկայումս պետական գերատեսչություններն իրենց կայքերում տեղադրում են բյուջետային հայտերը, որպեսզի հանրությունը հանդես գա առաջարկներով՝ նախքան հայտը կառավարություն ներկայացնելը: Այնուամենայնիվ, հանրության շրջանում առաջարկներ ներկայացնելու հնարավորության մասին իրազեկվածության պակաս կա: Սույն հանձնառության համաձայն՝ Ֆինանսների նախարարությունը միասնական հարթակ կստեղծի պետական կառավարման մարմինների բյուջեների հայտերի հղումներով, որպեսզի քաղաքացիները ներկայացնեն իրենց գաղափարները մշակման փուլում: Հարթակը կարող է խթանել պետական գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության հետաքրքրությունը մասնակցային բյուջետավորման վերաբերյալ: Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության հարցված ներկայացուցիչները թերահավատ են, որ հարթակը զգալիորեն կբարձրացնի հանրային մասնակցությունը բյուջետավորման գործընթացում:⁷⁷ Նրանք նշում են, որ հարթակի ակնկալվող օգտատերերը ոլորտային փորձառություն ունեցող ՔՀԿ-ներն են, այլ ոչ թե հանրությունը, սակայն այդ կազմակերպությունները սակավաթիվ են և հաճախ չունեն բյուջետավորման գործընթացներին ակտիվորեն մասնակցելու կարողություն: Ի լրումն՝ Ֆինանսների նախարարության ներկայացուցիչը նշել է, որ պետական գերատեսչություններից ակնկալվում է, որ հենց իրենք երկխոսություն կկազմակերպեն իրենց բյուջեի նախագծի շուրջ, քանի որ իրազեկման բարձրացումը հանձնառության պատասխանատու ստորաբաժանման գործառնությունների շրջանակից դուրս է:⁷⁸ Արդյունավետ իրականացման համար ԱՀՄ-ն առաջարկում է բյուջետային հայտերին կից պարզեցված բացատրություններ հրապարակել հայտերի բովանդակության վերաբերյալ՝ խուսափելով անհարկի տեխնիկական ձևակերպումներից:⁷⁹ Կառավարությունը և առանձին գերատեսչությունները կարող են հարցումներ անցկացնել՝ բյուջետային փաստաթղթերում առաջնահերթությունների վերաբերյալ քաղաքացիների կարծիքները ստանալու համար, դեմ առ դեմ քննարկումներ կազմակերպել բյուջեի հետ կապված առանձին թեմաների շուրջ, համատեղ միջոցառումներ ու ՔՀԿ-ների համար սեմինարներ անցկացնել՝ համապատասխան ոլորտային բյուջեների վերլուծության կարողությունները զարգացնելու նպատակով: Կարևոր է նաև, որ պետական գերատեսչությունները տեղեկություններ հրապարակեն այն մասին, թե

ինչ ընթացք են ստանում քաղաքացիների կողմից արված առաջարկները՝ ներառելով նախագծում դրանք չընդգրկելու պատճառները:

Հանձնառություն 6-ը նպատակ ունի ստեղծել ազգային գեոդեզիական պորտալ, որը հանրությանը հնարավորություն կտա փնտրել և վերլուծել տարբեր պետական մարմինների քարտեզագրական տարածական տվյալները և մետատվյալները:⁸⁰ Պորտալում, ի թիվս այլ բաղադրիչների, կներառվեն անշարժ գույքի, մակերևութային ջրերի, անտառների, պահպանվող տարածքների, գյուղատնտեսության, կլիմայի, ենթակառուցվածքների և պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ տվյալները: Գործողությունների ծրագրի համաձայն՝ պորտալ մուտք գործելը կլինի անվճար՝ որոշ բացառություններով: Սակայն հանձնառությունը չի հստակեցնում, թե որ տեղեկությունները հասանելի կլինեն առանց գրանցման և անվճար: ԱՀՄ-ն նմանատիպ խնդիր է նշել գործողությունների նախորդ ծրագրի՝ հողային կադաստրի վերաբերյալ հանձնառության հետ կապված, քանի որ այն օրենսդրական փոփոխություններ չէր նախատեսել հողի սեփականության վերաբերյալ տեղեկատվությունն անվճար ստանալու համար:⁸¹ Թեև ներկայիս հանձնառությունը ներառում է օրենսդրական փոփոխություններ, պարզ չէ, թե արդյոք այս փոփոխությունները ավելի մեծ ծավալով տվյալներ հասանելի կդարձնեն հանրությանը և ինչպիսին կլինի անվճար հասանելիություն ունեցող տվյալների շրջանակը: ԱՀՄ-ն առաջարկում է հողի կարգավիճակի և գույքի սեփականության վերաբերյալ տվյալները հրապարակայնորեն հասանելի և անվճար դարձնել: Սա հնարավորություն կտա գույքի սեփականության տվյալները համեմատել պաշտոնյաների գույքի հայտարարագրերի հետ, բացահայտել այն դեպքերը, երբ հողն օգտագործվում է գրանցված կարգավիճակից տարբերվող նպատակներով և հետամուտ լինել ապօրինի շինարարության դեպքերին: ԱՀՄ-ն նաև առաջարկում է թեմատիկ տարածական տվյալների համար պատասխանատու պետական մարմիններին (օրինակ՝ նախարարություններին և կոմիտեներին) ամբողջական և թարմացված տեղեկատվություն հրապարակել: Ավելի մեծ արդյունավետության և զգալի արդյունքների համար անհրաժեշտ կլինի բաց տվյալների ձևաչափ որդեգրել և հարթակի օգտատերերի համար մատչելի կարգավորումներ ապահովել:

Հանձնառություն 9-ում Արդարադատության նախարարությունը նախատեսում է դատական վարույթների վերաբերյալ վիճակագրություն հրապարակել դատաիրավական բարեփոխումների ռազմավարության շրջանակներում մշակվող Էլեկտրոնային արդարադատության (e-justice) համակարգում:⁸² E-justice համակարգը թույլ կտա օգտատերերին վիճակագրական վերլուծություններ կատարել դատական գործընթացների վերաբերյալ՝ սկսած մինչդատական փուլից: Սա կարող է բարելավել հանրային վերահսկողությունը և օգնել կառավարությանը տվյալների վրա հիմնված դատական բարեփոխումներ մշակել: Այնուամենայնիվ, հանձնառությունը չի հստակեցնում, թե ինչ տեսակի տվյալներ են տրամադրվելու, չի նշում որոնման չափորոշիչները, պարզ չէ՝ արդյոք վիճակագրությունը հրապարակվելու է նախապես սահմանված ցուցանիշներով, թե հնարավոր կլինի գտել տվյալները՝ ըստ օգտատերերի նախընտրած ցուցանիշների: Շահագրգիռ կողմերից մեկը Արդարադատության նախարարությանն առաջարկում է առաջնահերթություն տալ դատական գործերի տևողության վերաբերյալ վիճակագրության և նմանատիպ այնպիսի տեղեկատվության հրապարակմանը, որը կօգնի բացահայտել երկարատև դատավարական ընթացքի պատճառները և համապատասխան միջոցներ ձեռնարկել:⁸³ Շահագրգիռ կողմերի կարծիքով՝ կարևոր է նաև վիճակագրություն տրամադրել

ըստ հայցվորների և պատասխանողների ժողովրդագրական և մասնագիտական բնութագրերի (օրինակ՝ բարձրաստիճան պաշտոնյա, քաղաքացիական ծառայող կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ):⁸⁴ Բացի այդ, թեև Հայաստանում գործում է դատական գործերի բաշխման և դատավորների նշանակման՝ պատահականության սկզբունքով գործող համակարգ, մտավախություն կա, որ որոշ գործեր (օրինակ՝ նախկին պաշտոնյաների վերաբերյալ) հանձնարարվում են որոշակի դատավորների, իսկ գործերի բաշխումը դատավորների միջև միշտ չէ, որ համաչափ է: ԱՀՄ-ն առաջարկում է ավելացնել դատական գործերի որոնման տարբերակ՝ ըստ առանձին դատավորների: Համակարգի գործարկումից հետո շահակիցները կարող են իրազեկման միջոցառումներ և վերապատրաստումներ իրականացնել հնարավոր օգտատերերի համար:

Հանձնառություն 10-ը նպատակ ունի էլեկտրոնային աշխատանքային պայմանագրեր ներդնել պետական և մասնավոր հատվածի աշխատողների համար: Աշխատանքային պայմանագրերը մեկ հարթակում հասանելի կլինեն միայն գործատուներին և աշխատողներին, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին և Հարկային ծառայությանը: Բազմաթիվ են դեպքերը, երբ գործատուները պայմանագրեր չեն կնքում կամ դրանց կրկնօրինակը չեն տրամադրում աշխատողներին, ինչը դժվարացնում է աշխատողների իրավունքների պաշտպանությունը: Ավելին, կան դեպքեր, երբ պայմանագրերը կնքվում են օրենսդրության խախտմամբ կամ պոստ ֆակտում, ինչպես նաև պայմանագրի դրույթներով սահմանված աշխատանքային պայմաններ չապահովելու դեպքեր: Պարտադիր էլեկտրոնային պայմանագրերը կապահովեն աշխատակիցների համար իրենց պայմանագրի լիարժեք հասանելիությունը և պայմանագրերի՝ ժամանակին ստորագրումը ինչպես գործատուների, այնպես էլ աշխատողների կողմից: Դրանք նաև կօգնեն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին հեշտությամբ ստուգել պայմանագրի պայմանների համապատասխանությունը իրավական դրույթներին (օրինակելի ձևանմուշ տրամադրելու միջոցով): Շահակիցները հավատացած են, որ այս հանձնառությունը կարող է պաշտպանել աշխատողների իրավունքները, նվազեցնել ստվերային զբաղվածությունը և օգնել տեսչական մարմին կանխագիշ կերպով բացահայտել աշխատանքային իրավունքների հնարավոր խախտումները:⁸⁵ Համոզվելու համար, որ հանձնառության կատարումը նպաստում է բաց կառավարմանը, ԱՀՄ-ն տեսչական մարմինն առաջարկում է ավելի մանրամասն հաշվետվություններ տրամադրել հայտնաբերված խախտումների և պատժամիջոցների վերաբերյալ՝ միաժամանակ ընդլայնելով աշխատանքային իրավունքների, դրանց հնարավոր խախտումների, փոխհատուցման հնարավորությունների և պատժամիջոցների կիրառման վերաբերյալ տեղեկատվության շրջանակը: Շահագրգիռ կողմերը կարևորել են նաև տվյալների պատշաճ կիրառման վստահության ապահովումը՝ հաշվի առնելով վերջին տարիներին պետական տվյալների բազաներից տվյալների արտահոսքի դեպքերը:

² Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարության թիվ 691-Լ որոշումը «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին», Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, 13 մայիսի 2022 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791>:

³ ՀՀ կառավարության թիվ 1363-Ն որոշման հավելված, Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026 թթ.), Հայաստանի Հանրապետություն, 18 օգոստոսի 2021 թ., <https://www.gov.am/files/docs/4586.pdf>:

⁴ ՀՀ թիվ ՀՕ-11-Ն օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23 սեպտեմբերի 2003 թ., վերջին փոփոխությունը՝ 9 հունիսի 2022թ., Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=164931>:

⁵ ՀՀ կառավարության թիվ 1204-Ն որոշումը «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» 15 հոկտեմբերի 2015 թ., վերջին փոփոխությունը՝ 26 նոյեմբերի 2020 թ., Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147567>:

⁶ Տարբեր հարթակների մասին լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս «Հայաստանի էլեկտրոնային ռեսուրսների շտեմարանի», Թվային Հայաստան, <https://www.digital-armenia.am/hy/e-catalog?page=3&selectedType=1>:

⁷ Սուրեն Քրմոյան (Թվային Հայաստան ՀԿ), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 12 դեկտեմբեր 2022թ., Գրիշա Բալասանյան («ՀԵՏԲ» ՀԿ), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 28 դեկտեմբեր 2022թ.

⁸ Մարիամ Զադոյան (Իրավաբանների հայկական ասոցիացիա), 13 դեկտեմբեր 2022թ., հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, Քրմոյան, հարցազրույց:

⁹ «Հայաստան», «Open Data Watch», վերջին թարմացումը՝ 2023 թվականի մարտի 9-ին, <https://odin.opendatawatch.com/Report/countryProfileUpdated/ARM?year=2020>:

¹⁰ Տեղական մակարդակով Գյումրու և Վանաձորի քաղաքապետարանները հանձն են առել ստեղծել համայնքային գույքի էլեկտրոնային գրանցամատյան՝ բարելավելու համայնքային ռեսուրսների կառավարման թափանցիկությունը: Տե՛ս «Վանաձոր, Հայաստան. Համայնքային ռեսուրսների կառավարման թափանցիկություն. համայնքային ռեսուրսների կառավարման ռեգիստրի մշակում (AMVDR0001)», Հանձնառություն 1, տեղական ԲԿԳ գործողությունների ծրագիր 2021–2023, Գյումրի և Վանաձոր, Հայաստան, Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/members/vanadzor-armenia/commitments/AMVDR0001/>:

¹¹ *Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2019 թվականի հունիսի 20-ի դիրեկտիվ (ԵՄ) 2019/1024 Բաց տվյալների և հանրային հատվածի տեղեկատվության վերաօգտագործման մասին (վերանայված) EUR-Lex*, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?qid=1561563110433&uri=CELEX:32019L1024>:

¹² Մի շարք ուղեցույցներ, լավագույն փորձի վերաբերյալ նյութեր և այլ ռեսուրսներ կարելի է գտնել Բաց գիտելիքի հիմնադրամի (Open Knowledge Foundation) «Բաց տվյալների ձեռնարկում» (Open Data Handbook), <https://opendatahandbook.org/>:

¹³ Տե՛ս բաց տվյալների հարթակները՝ Կանադա, «Բաց տվյալներ», Կանադայի կառավարություն, վերջին փոփոխությունը՝ 2022 թվականի հոկտեմբերի 11-ին, <https://open.canada.ca/en/open-data>; Էստոնիա, «Eesti avaandmete teaveäraav» [Էստոնիայի բաց տվյալների տեղեկատվական շտեմարան], Էստոնիայի բաց տվյալներ, <https://avaandmed.eesti.ee/>; Ֆինլանդիա, «Ֆիննական բաց տվյալները մեկ վայրում», AVOINDATA.FI, <https://www.avoindata.fi/en>; Ուկրաինա, «Բաց տվյալների հարթակ», Ուկրաինայի թվային փոխակերպման նախարարություն, <https://data.gov.ua/>: Բաց տվյալների ավելի շատ հարթակներ կարելի է գտնել Բաց գիտելիքի հիմնադրամի (Open Knowledge Foundation) «Տվյալների պորտալներ. ամբողջ աշխարհում բաց տվյալների պորտալների համապարփակ ցուցակում», <https://dataportals.org/>:

¹⁴ «Իռլանդիա. Բաց տվյալների ներդրում (IE0007)», Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/members/ireland/commitments/IE0007/>:

¹⁵ «Ռումինիա. Բաց տվյալների հավաքածուների հրապարակում (RO0084)», Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/members/romania/commitments/RO0084/>:

¹⁶ «Խորվաթիա. Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ վերապատրաստում (HR0042)», Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/members/croatia/commitments/hr0042/>:

¹⁷ ՀՀ կառավարության թիվ 691-Լ որոշում, 13 մայիսի 2022 թ., Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791>:

¹⁸ *Գլոբալ համատեքստը և առաջընթացի ուղին*, 21 դեկտեմբերի 2021 թ., ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն), https://www.oecd-ilibrary.org/governance/oecd-report-on-public-communication_22f8031c-en:

¹⁹ *Քաղաքացիական հասարակության ներկայիս վիճակը և փոփոխվող դերը հանրային քաղաքականության գործընթացներում*, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2022 թ., https://e-research.am/storage/books/CSO%20Research_Current_Challenges_Margaryan_Hovakimyan_Galstyan_CERC.pdf:

²⁰ *Ապատեղեկատվությունն ու կեղծ տեղեկատվությունը Հայաստանում. դիմակայելով կեղծ պատմություններին*, «Freedom House», հունիս 2021 թ., https://freedomhouse.org/sites/default/files/2021-07/Disinformation-in-Armenia_Am-final.pdf:

- ²¹ Անուշ Հակոբյան և Տաթևիկ Մարգարյան, ՔՀԿ չափիչ 2021, Հայաստանի զեկույց, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL) և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2022 թ., <https://transparency.am/hy/publication/pdf/279/10056>:
- ²² Շուշան Դոյդոյան («Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 25 նոյեմբերի 2022 թ.:
- ²³ Սյուզաննա Սողոմոնյան (Իրավաբանների հայկական ասոցիացիա), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 13 դեկտեմբերի 2022 թ.:
- ²⁴ Լիլյա Աֆրիկյան (Վարչապետի աշխատակազմ), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 22 նոյեմբերի 2022 թ.:
- ²⁵ Բալասանյան, հարցազրույց:
- ²⁶ «Հայաստանի հանրային մասնակցության հարթակների և հնարավորությունների քարտեզագրում», «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ), <https://transparency.am/hy/publications/view/409>; Քաղաքացիական հասարակության ներկայիս վիճակը և փոփոխվող դերը, https://e-research.am/storage/books/CSO%20Research_Current_Challenges_Margaryan_Hovakimyan_Galstyan_CERC.pdf:
- ²⁷ Աֆրիկյան, Հարցազրույց:
- ²⁸ Այս հանձնառության մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ «Երևան, Հայաստան. Բաց, թափանցիկ և մասնակցային հանրային քննարկումների կազմակերպում և իրականացում (AMERV0001), Երևանի ԲԿԳ գործողությունների ծրագիր 2023–2024, Հանձնառություն 1, Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/members/yerevan-armenia/commitments/AMERV0001/>:
- ²⁹ Արփինե Հակոբյան («ՀԿ Կենտրոն» ՀԿ), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 23 նոյեմբերի 2022 թ., 2018–2019 համայնքների բյուջեների մոնիտորինգի ամփոփիչ զեկույց, ԹԻՀԿ, 2020 թ., էջ 18–24, <https://transparency.am/hy/publication/pdf/223/1327>; Մառա Պետրոսյան, «Համայնքները տարեկան բյուջեն հաստատել են առանց հանրային լսումներ անցկացնելու», ՀԵՏՔ, 14 փետրվարի 2022 թ. <https://www.hetq.am/hy/article/141142>:
- ³⁰ «Հանրային մասնակցության հարթակների քարտեզագրում», <https://transparency.am/hy/publications/view/409>:
- ³¹ Տե՛ս Մարտունի համայնքում քաղաքացիական մասնակցության վերաբերյալ դեպքի ուսումնասիրությունը կամ Ապարան համայնքի օրինակը. «Հանրային մասնակցության հարթակների քարտեզագրում», <https://transparency.am/hy/publications/view/409>. Գայանե Միրզոյան և Անահիտ Մինասյան, «Ապարան. էկո-կանգառ ճանապարհորդների համար», «Ուրբանիստա», <https://urbanista.am/aparanstory>:
- ³² Հակոբյան, հարցազրույց; Գրիշա Խաչատրյան (Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի հետ, 20 դեկտեմբերի 2022 թ.
- ³³ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում», վերջին թարմացումը՝ 2022 թվականի մարտին, <https://www.giz.de/en/worldwide/20315.html>:
- ³⁴ «Մասնակցային բյուջեի իրականացում, Արմավիր, Հայաստան (AMAVR0002)», Բաց կառավարման գործընկերություն. <https://www.opengovpartnership.org/members/armavir-armenia/commitments/AMAVR0002/>:
- ³⁵ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում. դրական զարգացումներ, սակայն տեղական իշխանությունների լիազորությունների, խորհրդակցությունների և ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ հետագա առաջընթացի անհրաժեշտություն», Եվրոպայի խորհուրդ, 15 հունիսի 2021 թ., <https://www.coe.int/en/web/congress/-/local-self-government-in-armenia-positive-developments-but-still-room-for-progress-regarding-the-powers-the-consultation-and-the-financial-resources-o>:
- ³⁶ Աշոտ Գիլոյան (Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 14 դեկտեմբերի 2022 թ., Մասնակցային բյուջետավորման ձեռնարկ, GIZ, 2020 թ., https://api.mtad.am/storage/pages/files/2022/03/pdf/02_9-15-sc319-62e15fda33353.pdf:
- ³⁷ Խաչատրյան, հարցազրույց, Գայանե Նալբանդյան (GIZ Հայաստան), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 27 դեկտեմբերի 2022 թ.:
- ³⁸ Միավորված ազգերի կազմակերպության հանրային կառավարման փորձագետների կոմիտե (CEPA), *CEPA-ի մասնակցային բյուջետավորման ուղեցույց*, 2022 թվականի հունվար, Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական հարցերի վարչություն, <https://www.oidp.net/docs/repo/doc1198.pdf>:
- ³⁹ «Scoping Toolkit», Մասնակցային բյուջետավորման նախագիծ, <https://www.participatorybudgeting.org/launch-pb/>:
- ⁴⁰ *Անկախ հաշվետվական մեխանիզմի զեկույց 2018–2021 թվականների գործողությունների տեղական ծրագրի վերաբերյալ. նախնական արդյունքներ և դասեր 16 առաջամարտիկներից*, Բաց կառավարման գործընկերություն,

էջ 103, <https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2022/05/IRM-Report-for-Local-Action-Plans-2018-2021.pdf>:

⁴¹ «Վրաստան. մասնակցային բյուջետավորում (GE0084)», Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/members/georgia/commitments/GE0084/>:

⁴² «Գաղափարներ», Բաթումի քաղաքապետարանի Քաղաքային ծառայությունների գործակալություն, 2019, <https://idea.batumi.ge/ideas?category=5>:

⁴³ Տե՛ս Գյումրի-Վանաձոր 2021–2023 թվականների գործողությունների ծրագրի 2-րդ հանձնառությունը. «Գյումրի, Հայաստան. Բնտերակտիվ բյուջեի ներդրում. Համայնքի բյուջեի թափանցիկության բարձրացում «Բաց տվյալների» սկզբունքով (AMGYR0002)», <https://www.opengovpartnership.org/members/gyumri-armenia/commitments/AMGYR0002/>:

⁴⁴ «Կոտ դ'Իվուար. կայացվեցին մասնակցային բյուջե ստեղծելու մասին որոշումներ (CI0026)», Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/members/cote-divoire/commitments/CI0026/>:

⁴⁵ ՀՀ թիվ ՀՕ-206-Ն օրենքը «Հանրային ծառայության մասին», 23 մարտի 2020 թ., վերջին փոփոխությունը՝ 07 հուլիսի 2022 թ., հոդված 29, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166838>: 2022 թվականի դեկտեմբերի փոփոխություններով սահմանվել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պետք է ռեեստրում հաշվառեն թույլատրելի նվերները, եթե դրանց արժեքը գերազանցում է 40000 դրամը (մոտ 100 ԱՄՆ դոլար):

⁴⁶ Հասմիկ Տիգրանյան (Արդարադատության նախարարություն), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 26 դեկտեմբերի 2022թ., Արմեն Խուդավերդյան (ԹԲՀԿ), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 29 նոյեմբերի 2022թ., Սողոմոնյան, հարցազրույց:

⁴⁷ ՀՀ կառավարության թիվ 1332-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», 03 հոկտեմբերի 2019 թ., Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168051>:

⁴⁸ ՀՀ թիվ ՀՕ-97-Ն օրենքը «Ազդարարման համակարգի մասին», 09 հունիսի 2017թ., վերջին փոփոխությունները՝ 09 հունիսի 2022թ., Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165100>:

⁴⁹ ՀՀ Արդարադատության նախարարություն «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակ», 2019 թ., <https://azdararir.am>:

⁵⁰ Հայաստանի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը անկախ պետական մարմին է, որը պատասխանատու է պետական պաշտոնյաների գույքի ու եկամուտների հայտարարագրերի պահպանման ու վերլուծության, էթիկայի հարցերի վերաբերյալ առաջարկների տրամադրման (օրինակ՝ բարելավաբարություն, անհամատեղելիության պահանջներ, շահերի բախում, վարչական իրավախախտումների հետ կապված դեպքերի քննություն), ինչպես նաև համապատասխան ոլորտներում վարչական պատժամիջոցների կիրառման համար: Տե՛ս ավելին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» թիվ ՀՕ-96-Ն ՀՀ օրենքում, 09 հունիսի 2017թ., Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271>:

⁵¹ Նարինե Ավետիսյան (Հայաստանի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 28 նոյեմբերի 2022թ.:

⁵² Սողոմոնյան, հարցազրույց, Տիգրանյան, հարցազրույց:

⁵³ Խուդավերդյան, հարցազրույց, Բալասանյան, հարցազրույց:

⁵⁴ Թույլատրելի նվերների և հյուրասիրության վերաբերյալ մտահոգությանն անդրադարձ է կատարվել Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO) վերջին զեկույցում ներառված հանձնարարականներում: Տե՛ս Հայաստանի պարտավորությունների կատարման գնահատման զեկույցի չորրորդ փուլ, Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում, GRECO և Եվրոպայի խորհուրդ, 22 սեպտեմբերի 2021 թ., էջ 11, <https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad>:

⁵⁵ ՀՀ օրենք թիվ ՀՕ-495-Ն «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 07 դեկտեմբերի 2022թ., Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172090>:

⁵⁶ ՀՀ կառավարության թիվ 386-Ն որոշումը «Էլեկտրոնային եղանակով գնումների կատարման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1370-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին», 06 ապրիլի 2017թ., Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=163153>:

⁵⁷ «Հաշվետվություններ», Էլեկտրոնային գնումների պլանավորման և պայմանագրերի կառավարման համակարգ (PPCM), <https://armeps.am/ppcm/public/reports?lang=hy>:

⁵⁸ ՀՀ օրենք թիվ ՀՕ-21-Ն «Գնումների մասին», ընդունված 16 դեկտեմբերի 2016թ., Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165080>:

⁵⁹ «Էլեկտրոնային աճուրդ», <https://eauction.ameps.am/>: Այն նաև ներկայացնում է ընտրող հանձնաժողովի կողմից ստորագրված շահերի բախման մասին հայտարարագրերը:

⁶⁰ «2023 թվականի հունվարի 1-ից բոլոր իրավաբանական անձինք պարտավոր են ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր», Արդարադատության նախարարություն, 25 հոկտեմբերի 2022 թ., <https://moj.am/article/3312>:

⁶¹ Օրինակ՝ «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը» ներառում է էլեկտրոնային գնումների հարթակի արդիականացումը, տե՛ս ՀՀ կառավարության թիվ 1716-Լ որոշումը «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թթ. բարեփոխումների ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թթ. բարեփոխումների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 28 նոյեմբերի 2019 թ., Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137596>:

⁶² «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մշտադիտարկման հինգերորդ փուլ», ՏՀԶԿ, 30 մայիսի 2022 թ., https://www.oecd-ilibrary.org/governance/anti-corruption-reforms-in-armenia_e56cfa9-en:

⁶³ «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում», https://www.oecd-ilibrary.org/governance/anti-corruption-reforms-in-armenia_e56cfa9-en:

⁶⁴ «Պետական գնումների էլեկտրոնային հարթակների մոնիթորինգ. լրագրողական հայացք», Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 17 հունիսի 2022թ., <http://www.foi.am/hy/research/item/2284/>; Գործարարների շրջանում տնտեսական մրցակցության ընկալման սոցիոլոգիական հետազոտություն, ԹԻՀԿ, 26 փետրվարի 2020թ., <https://transparency.am/hy/publication/201>; «Պետական գնումների ոլորտում օրենսդրության բարեփոխման վերաբերյալ առաջարկներ», Իրավաբանների հայկական ասոցիացիա, ՔՀԿ-ների Հակակոռուպցիոն կոալիցիա, Հայկական բիզնես կոալիցիա, հունվար 2020թ., <https://armla.am/wp-content/uploads/2020/03/Գնումների-ոլորտում-առաջարկություններ-ՖՆ-ին-ուղղված-28.02.pdf>:

⁶⁵ Հակոբյան, հարցազրույց; Մանե Մադոյան (Ինֆորմացիայի ազատության կենտրոն), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 19 դեկտեմբերի 2022թ., Բալասանյան, հարցազրույց:

⁶⁶ ՀՀ կառավարության թիվ 386-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=163153>:

⁶⁷ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից ԱՀՄ-ին տրամադրված տեղեկատվությունը սույն զեկույցի նախահրապարակման փուլում վերանայման ժամանակ, 24 ապրիլի 2023թ.:

⁶⁸ Ալեքսանդր Ֆուրնաս, «Թափանցիկության դեպքի ուսումնասիրություն. պետական գնումները Սլովակիայի Հանրապետությունում», «Sunlight» հիմնադրամ, 12 օգոստոսի 2013թ., <https://sunlightfoundation.com/2013/08/12/case-study-public-procurement-in-the-slovak-republic/>:

⁶⁹ «Բաց պայմանագրերի տվյալների չափորոշիչ», Բաց տվյալների գործընկերություն, <https://standard.open-contracting.org/latest/en/schema/>:

⁷⁰ Սերգեյ Շահնազարյան (Ֆինանսների նախարարություն), հեռախոսային հաղորդակցություն ԱՀՄ հետազոտողի հետ, 24 հունվարի 2023 թ.:

⁷¹ «Լիտվա. Պետական գնումների տվյալների բացում (LT0031)», Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/members/lithuania/commitments/LT0031/>:

⁷² «Պետական գնումների հանրային վերահսկողություն», DOZORRO, <https://dozorro.org/>:

⁷³ «Մոլդովայի Հանրապետություն. պետական գնումների գործընթացի մասին գիտելիքների բարելավում (MD0062)», Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/members/republic-of-moldova/commitments/MD0062/>:

⁷⁴ «Տեղեկատվության ազատությունը Հայաստանում 2022», Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 1 հուլիսի 2022 թ., <http://www.foi.am/en/research/item/2291/>; Դոյդոյան, հարցազրույց:

⁷⁵ Դոյդոյան, հարցազրույց:

⁷⁶ Համաձայն Միջազգային բյուջետային գործընկերության 2021 թվականի բաց բյուջեի հետազոտության՝ Հայաստանի հանրային մասնակցության գնահատականը 6 է (100-ից), որն ամենացածրն է տարածաշրջանում: Տե՛ս՝ «Հայաստան», Միջազգային բյուջետային գործընկերություն, <https://internationalbudget.org/open-budget-survey/country-results/2021/armenia>:

⁷⁷ Վարուժան Հոկտանյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 29 նոյեմբերի 2022 թ., Մադոյան, հարցազրույց:

⁷⁸ Ռուզաննա Գաբրիելյան (Ֆինանսների նախարարություն), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 9 դեկտեմբերի 2022թ.:

⁷⁹ Դոյդոյան, հարցազրույց/ Սողոմոնյան, հարցազրույց:

⁸⁰ Սույն նախաձեռնությունը սկսվել է նախքան գործողությունների ծրագրի ընդունումը և ներկայումս գործում է փորձական ձևաչափով՝ մետատվյալների քարտեզն ու կատալոգը դիտելու հնարավորությամբ: Տե՛ս՝ «Ազգային գեոպորտալ», Geoportal.am, <https://geoportal.am>:

⁸¹ Քաղաքացիները պետք է դիմեն Կադաստրի կոմիտե և վճարում կատարեն՝ ընտրած հասցեի սեփականատիրոջ և հողի կարգավիճակի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Հայաստան. Հայաստանի նախագծման զեկույց 2018–2020», Բաց կառավարման գործընկերություն, 28 հոկտեմբերի 2019 թ., <https://www.opengovpartnership.org/documents/armenia-design-report-2018-2020/>:

⁸² Սույն հանձնառությունն արտացոլում է դատաիրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության բաղադրիչը: Տե՛ս՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշման Հավելված 2-ը, «ՀՀ դատաիրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիր», 21 հուլիսի 2022թ., Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176970>:

⁸³ Քրմոյան, հարցազրույց:

⁸⁴ Զադոյան, հարցազրույց:

⁸⁵ Անի Հարությունյան (Արմավիրի զարգացման կենտրոն), հարցազրույցը՝ ԱՀՄ հետազոտողի կողմից, 24 նոյեմբերի 2022թ.: Սողոմոնյան, հարցազրույց:

Բաժին III. Մեթոդաբանություն և ԱՀՄ չափանիշներ

Սույն ուսումնասիրության նպատակը գնահատումը չէ: Այն նախատեսված է որպես արագ, անկախ, տեխնիկական ուսումնասիրություն՝ նկարագրելու գործողությունների ծրագրի հիմնական բնութագրերը և ԱՀՄ-ի կողմից հայտնաբերված ուժեղ կողմերը և մարտահրավերները, որպեսզի աջակցի ավելի արդյունավետ իրականացման գործընթացին: ԱՀՄ-ն հատկապես ուշադրություն է դարձնում արդյունքին միտված ամենաբարձր ներուժը ունեցող, երկրում շահագրգիռ կողմերի համար առաջնային նշանակություն ունեցող, ազգային բաց կառավարման համատեքստում առաջնահերթ հանդիսացող կամ այս գործոնների համակցությամբ ներկայացված հանձնառություններին:

ԱՀՄ-ի կողմից իրականացվում է հանձնառությունների գտման և խմբավորման հետևյալ գործընթացը՝ բացահայտելու հավակնոտ բարեփոխումները կամ հանձնառությունները:

Քայլ 1. Որոշել, թե ինչն է ենթակա ուսումնասիրման՝ ելնելով հանձնառության ստուգելիությունից, ըստ գործողությունների ծրագրում առկա շարադրանքի:

Քայլ 2. Որոշել, թե արդյոք հանձնառությունը համապատասխանում է բաց կառավարման շրջանակին: Արդյո՞ք այն համահունչ է ԲԿԳ արժեքներին:

Քայլ 3. Ուսումնասիրել այն հանձնառությունները, որոնք ստուգելի են և ունեն բաց կառավարման տեսանկյուն՝ պարզելու համար, թե արդյոք հարկ է խմբավորել որոշ հանձնառություններ: Հանրային քաղաքականության ընդհանուր նպատակ հետապնդող կամ նույն բարեփոխումներին կամ ոլորտային քաղաքականության նույն հիմնահարցին վերաբերող հանձնառությունները պետք է խմբավորվեն: Խմբավորված հանձնառությունների՝ արդյունքին միտված ներուժը պետք է գնահատվի որպես մեկ ամբողջություն: Հանձնառությունները խմբավորելիս ԱՀՄ-ի անձնակազմը պետք է կատարի հետևյալ քայլերը:

ա. Սահմանել ընդհանուր թեմաները: Եթե գործողությունների ծրագիրն արդեն խմբավորված չէ ըստ թեմաների, ԱՀՄ-ի աշխատակիցները որպես հիմք կարող են օգտագործել ԲԿԳ թեմատիկ պիտակները:

բ. Ուսումնասիրել հանձնառությունների նպատակները՝ բացահայտելու այն հանձնառությունները, որոնք վերաբերում են քաղաքականության նույն խնդրին կամ նպաստում են նույն ընդհանուր ոլորտային քաղաքականության կամ կառավարման բարեփոխումներին:

գ. Ըստ անհրաժեշտության խմբավորել հանձնառությունները:

Հանձնառությունները կարող են արդեն իսկ խմբավորված լինել գործողությունների ծրագրում որևէ քաղաքականության կամ կառավարման բարեփոխումների ենթավերնագրի ներքո:

Քայլ 4. Գնահատել խմբավորված կամ առանձին հանձնառությունների՝ արդյունքին միտված ներուժը:

Տվյալների գտումը ներքին գործընթաց է: Հավելված 1-ում տվյալներ են ներկայացված յուրաքանչյուր հանձնառության վերաբերյալ: Ի լրումն՝ սույն զեկույցի ներքին վերանայման գործընթացում ԱՀՄ-ն նաև ստուգում է ստացված տվյալների ճշգրտությունը և ապա լրացուցիչ նկատառումներ հավաքագրում գործընկերային գնահատման, անհրաժեշտության

ԱՀՄ Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024
Հանրային քննարկման համար հասանելի տարբերակ. մեջբերումներն արգելվում են

դեպքում՝ ԲԿԳ Աջակցության բաժնից հետադարձ կապի, երկրի շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցների և վավերացման, ինչպես նաև արտաքին փորձագիտական եզրակացության և ԱՀՄ Միջազգային փորձագիտական խմբի (ՄՓԽ) վերահսկողության միջոցով:

Ինչպես նկարագրված է վերը, ԱՀՄ-ն այս ուսումնասիրության համար հիմնվում է **երեք հիմնական ցուցանիշների** վրա.

I. Ստուգելիություն

- **Այո, բավականաչափ հստակ է ուսումնասիրման համար.** Գործողությունների ծրագրի տեքստում սահմանված նպատակները և առաջարկվող միջոցառումները բավականաչափ հստակ են իրականացման գործընթացը գնահատելու համար և ներառում են օբյեկտիվորեն ստուգելի գործողություններ:
- **Ոչ, բավականաչափ հստակ չէ ուսումնասիրման համար.** Գործողությունների ծրագրի տեքստում սահմանված նպատակները և առաջարկվող միջոցառումները հստակ չեն իրականացման գործընթացը գնահատելու համար և չեն ներառում բացահայտ ստուգելի գործողություններ:
- Այն հանձնառությունները, որոնք ստուգելի չեն, կհամարվեն ուսումնասիրման ոչ ենթակա, և հետագա գնահատում չի իրականացվի:

II. Բաց կառավարման տեսանկյուն

Այս ցուցանիշը սահմանում է, թե արդյոք հանձնառությունը համապատասխանում է բաց կառավարման արժեքներին՝ թափանցիկությանը, քաղաքացիական մասնակցությանը կամ հանրային հաշվետվողականությանը, ինչպես որ դրանք սահմանված են Բաց կառավարման հռչակագրում և ԲԿԳ Կառավարման հոդվածներում՝ պատասխանելով ստորև ուղղորդող հարցերին: Հիմք ընդունելով հանձնառությունների տեքստի մանրագնին ընթերցումը, ԱՀՄ-ն նախ որոշում է, թե արդյոք հանձնառությունն ունի բաց կառավարման տեսանկյուն.

- **Այո/Ոչ.** Արդյո՞ք հանձնառությունը նախատեսում է քաղաքականության որևէ ոլորտ, հաստատություն կամ որոշումների կայացման գործընթաց դարձնել ավելի թափանցիկ, մասնակցային կամ հանրության առջև հաշվետու:

ԱՀՄ-ն օգտագործում է ԲԿԳ այն արժեքները, որոնք սահմանված են Կառավարման հոդվածներում: Բացի այդ, ԲԿԳ արժեքների վերաբերյալ հետևյալ հարցերը կարող են օգտագործվել որպես հիմք՝ հանձնառությունների վերլուծության մեջ բաց կառավարման կոնկրետ տեսանկյունը սահմանելու համար.

- **Թափանցիկություն.** Արդյո՞ք կառավարությունը կհրապարակի ավելի շատ տեղեկատվություն, կբարելավի իրավական կամ ինստիտուցիոնալ շրջանակները՝ երաշխավորելու համար տեղեկատվության տարածման և ստացման իրավունքը, կբարելավի հանրությանը տրամադրվող տեղեկատվության որակը, կառավարության որոշումների կայացման գործընթացների կամ հաստատությունների թափանցիկությունը:
- **Քաղաքացիական մասնակցություն.** Արդյո՞ք կառավարությունը հանրության կողմից որոշումների վրա ազդեցություն կամ որոշումների կայացմանը ներդրում ունենալու

համար նոր հնարավորություններ, գործընթացներ կամ կառուցակարգեր կստեղծի կամ կբարելավի առկա հնարավորությունները, գործընթացները կամ կառուցակարգերը: Արդյո՞ք կառավարությունը կստեղծի, կխթանի կամ կբարելավի մասնակցային կառուցակարգերը փոքրամասնությունների կամ թերներկայացված խմբերի համար: Արդյո՞ք կառավարությունը կխթանի նպաստավոր իրավական միջավայրի ստեղծումը՝ ապահովելով հավաքների, միավորումների և խաղաղ բողոքների ազատությունները:

- **Հանրային հաշվետվողականություն.** Արդյո՞ք կառավարությունը նոր հնարավորություններ կստեղծի կամ կբարելավի առկա հնարավորությունները՝ պաշտոնյաներին իրենց գործողությունների համար պատասխանատվության ենթարկելու համար: Արդյո՞ք կառավարությունը կզարգացնի իրավական, քաղաքական կամ ինստիտուցիոնալ շրջանակներ՝ խթանելու պետական պաշտոնյաների հաշվետվողականությունը:

III. Արդյունքին միտված ներուժ

ԱՀՄ-ն ճշգրտել է այս ցուցիչը, որը նախկինում «պոտենցիալ ազդեցության» ցուցիչ էր կոչվում, որպեսզի այստեղ հաշվի առնվեն ԱՀՄ գործընթացի վերանայման ընթացքում ԲԿԳ համայնքի հետ խորհրդակցության արդյունքում ստացած հետադարձ կապի արդյունքները: ԱՀՄ զեկույցի նոր՝ արդյունքների վրա հիմնվող ռազմավարական ուղղվածությունից ելնելով՝ ԱՀՄ-ն փոփոխել է այս ցուցիչը՝ ներկայացնելու ակնկալվող արդյունքներն ու ներուժը, որոնք կստուգվեն իրականացման փուլից հետո ԱՀՄ արդյունքների հաշվետվության շրջանակներում: Հաշվի առնելով գործողությունների ծրագրի ուսումնասիրության նպատակը, արդյունքին միտված ներուժի գնահատումը վաղ փուլերում ընդամենը ցույց է տալիս հանձնառության՝ բովանդակալից արդյունքների հանգեցնելու հնարավորությունը՝ հիմնվելով գործողությունների ծրագրում ներկայացված ձևակերպման վրա և համեմատություն տանելով համապատասխան քաղաքականության ոլորտում առկա վիճակի հետ:

Ցուցիչի սանդղակը սահմանվում է հետևյալ կերպ.

- **Անորոշ.** Հանձնառության նպատակը գործող օրենսդրությանը, պահանջներին կամ քաղաքականությանը համահունչ ընթացիկ գործելակերպի շարունակականության ապահովումն է՝ առանց մատնանշելու ավելացված արժեքը կամ բաց կառավարման մոտեցման բարելավումը ի տարբերություն առկա գործելակերպի:
- **Չափավոր.** Դրական, բայց մեկուսացված նախաձեռնություն կամ փոփոխություն առկա գործընթացներում, գործելակերպում կամ քաղաքականության մեջ: Հանձնառությունը առաջ չի բերում օրենքով սահմանված կարգով պարտադիր կամ ինստիտուցիոնալ փոփոխություններ կառավարության ողջ համակարգում կամ տվյալ քաղաքականության ոլորտը կառավարող հաստատություններում: Սրա օրինակներից են գործիքները (օրինակ՝ վեբկայքերը) կամ տվյալների հրապարակումը, վերապատրաստումները կամ պիլոտային նախագծերը:
- **Զգալի.** Գործելակերպի, քաղաքականությունների կամ տվյալ քաղաքականության ոլորտը կառավարող հաստատությունների, պետական հատվածի կամ քաղաքացիների և պետության միջև հարաբերությունների համար հնարավոր

ԱՀՄ Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024
Հանրային քննարկման համար հասանելի տարբերակ. մեջբերումներն արգելվում են

հեղափոխական փոփոխություն բերող հանձնառություն: Հանձնառությունը
պարտադիր և ինստիտուցիոնալ փոփոխություններ է բերում կառավարության ողջ
համակարգում:

Սույն ուսումնասիրությունը պատրաստվել է ԱՀՄ-ի կողմից՝ Տաթևիկ Մարգարյանի հետ
համագործակցությամբ և վերանայվել է ԱՀՄ արտաքին փորձագետ Էռնեստո Վելասկոյի
կողմից: ԱՀՄ մեթոդաբանությունը, ԱՀՄ զեկույցների որակը և ուսումնասիրման
գործընթացը վերահսկվում են ԱՀՄ ՄՓԽ-ի կողմից: Լրացուցիչ տեղեկությունների համար
տե՛ս ԲԿԳ կայքի «Ընդհանուր ակնարկ ԱՀՄ մասին» բաժինը:⁸⁶

⁸⁶ «Ընդհանուր ակնարկ. Անկախ հաշվետվական մեխանիզմ», Բաց կառավարման գործընկերություն,
<https://www.opengovpartnership.org/irm-guidance-overview/>.

Հավելված 1. Տվյալներ ըստ հանձնառությունների⁸⁷

Հանձնառություն 1. Տվյալների քաղաքականությունը սահմանող օրենսդրության ձևավորում
• Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ զգալի
Հանձնառություն 2. Պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության ձևավորում
• Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր
Հանձնառություն 3. Տեղեկատվության ազատության ոլորտի ինքնագնահատման համակարգ
• Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր
Հանձնառություն 4. Բյուջետային գործընթացում մասնակցային կառուցակարգերի լրամշակում և ներդրում
• Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր
Հանձնառություն 5. «Մասնակցային բյուջետավորման» ներդրում տեղական մակարդակում
• Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր
Հանձնառություն 6. Քարտեզագրական տարածական տվյալների և մետատվյալների հասանելիությունը
• Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր
Հանձնառություն 7. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստր
• Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր
Հանձնառություն 8. Էլեկտրոնային գնումների համապարփակ համակարգ. իրական շահառուների ինստիտուտի կատարելագործում
• Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր
Հանձնառություն 9. «eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիք

ԱՀՄ Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024
Հանրային քննարկման համար հասանելի տարբերակ. մեջբերումներն արգելվում են

• Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ այո • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր
Հանձնառություն 10. Աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգ
• Ստուգելի՝ այո • Արդյո՞ք այն համապատասխանում է բաց կառավարման շրջանակին՝ ոչ • Արդյունքին միտված ներուժը՝ չափավոր

⁸⁷ **Խմբագրական նշումներ.**

1. Խմբավորված հանձնառությունների համար արդյունքին միտված ներուժի գնահատումն իրականացվում է ոչ թե առանձին հանձնառությունների, այլ խմբի մակարդակով:
2. Հանձնառությունների անվանումները կարող են խմբագրվել՝ հակիրճության նպատակով:
Հանձնառությունների ամբողջական տեքստը տե՛ս Հայաստանի 2022–2024 թվականների գործողությունների ծրագրում՝ *Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1568-Լ որոշման հավելված, «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը*», Բաց կառավարման գործընկերություն, 6 հոկտեմբերի 2022 թ., https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2022/10/Armenia_Action-Plan_2022-2024_Dec_ARM.pdf

Հավելված 2. Գործողությունների ծրագրի համաստեղծում

ԲԿԳ անդամ երկրներին խրախուսվում է ձգտել լիարժեք իրականացնել 2022թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ ԲԿԳ մասնակցության և համաստեղծման վերանայված չափորոշիչները:⁸⁸ 2022 թվականից ի վեր գործողությունների ծրագրեր ներկայացրած բոլոր երկրների դեպքում ԱՀՄ գնահատումն իրականացվում է արդեն ըստ վերանայված չափորոշիչների: ԲԿԳ-ն 24-ամսյա արտոնյալ ժամկետ է սահմանել՝ դեպի նոր չափորոշիչներ արդար և թափանցիկ անցում ապահովելու համար: Այս ընթացքում ԱՀՄ-ն կգնահատի երկրների՝ չափորոշիչներին և դրանց նվազագույն պահանջներին համապատասխանությունը:⁸⁹ Այնուամենայնիվ, երկրների գործունեությունը կհամարվի ԲԿԳ գործընթացին հակասող, եթե նրանք չբավարարեն նվազագույն պահանջները՝ սկսած գործողությունների այն ծրագրերից, որոնց մեկնարկը նախատեսվում է 2024 թվականին կամ դրանից հետո: Աղյուսակ 2-ը ցույց է տալիս, թե որքանով է տվյալ երկրի մասնակցությունը և համաստեղծման գործելակերպը համապատասխանում գործողությունների ծրագրի մշակման ընթացքում կիրառվող նվազագույն պահանջներին:

Աղյուսակ 2. Համապատասխանություն նվազագույն պահանջներին

Նվազագույն պահանջ	Համապատասխանե՞լ է համաստեղծման փուլում	Համապատասխանե՞լ է իրականացման փուլում
1.1. Երկխոսության հարթակ. Կառավարությունը հրավիրել է գործողությունների չորրորդ ծրագրի (2018–2020) շուրջ ձևավորված բազմաշահառու աշխատանքային խմբի անդամներին՝ մասնակցելու հինգերորդ ծրագրի համաստեղծմանը: Կառավարությունը հրավիրել է նաև կառավարությունից, միջազգային կազմակերպություններից և քաղաքացիական հասարակությունից այլ շահագրգիռ կողմերի, որոնք հետաքրքրություն են ցուցաբերել մասնակցելու ԲԿԳ գործընթացին: Բազմաշահառու խմբերի հանդիպումները տեղի են ունեցել 2021 թվականի հոկտեմբերի 27-ին, 2022 թվականի մայիսի 19-ին և 2022 թվականի հոկտեմբերի 7-ին:⁹⁰ Շահակիցների հետ համագործակցելով՝ կառավարությունը 2021 թվականի դեկտեմբերին կազմակերպել է աշխատաժողով, իսկ 2022 թվականի մարտին՝ չորս թեմատիկ հանդիպում՝ հանձնառությունները քննարկելու նպատակով: Աշխատանքային խմբին անդամակցելու հայտի ձևանմուշը հասանելի է Հայաստանի ԲԿԳ կայքում:⁹¹ Ներկայումս պաշտոնական աշխատանքային խումբ դեռ չի ստեղծվել: Գործողությունների նախորդ ծրագրում ընդգրկված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) մեծ մասը շարունակել է իր մասնակցությունը հանդիպումներին, իսկ խմբին միանալու հայտ ներկայացրած նոր ՔՀԿ-ները, որպես կանոն, ընդգրկվել են գործընթացում: Կառավարության ԲԿԳ համակարգողը համաստեղծման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն է տարածել նախորդ աշխատանքային խմբի անդամների և այլ	Ոչ	Ենթակա է գնահատման վերաբերյալ գեկույցում

շահագրգիռ անձանց շրջանում՝ սոցիալական լրատվամիջոցների և էլեկտրոնային փոստի միջոցով:⁹² Սակայն մասնակցության հայտի ձևանմուշը, սոցիալական ցանցերում արված հրապարակումները և ԲԿԳ կայքը աշխատանքային խմբին մասնակցելու կանոնների կամ ընթացիկ անդամակցության վերաբերյալ տեղեկատվություն չեն պարունակում:⁹³ ԲԿԳ-ի մասնակցության և համաստեղծման չափորոշիչները պահանջում են, որ անդամ երկրի երկխոսության հարթակում մասնակցելու հիմնական կանոնները հրապարակային լինեն: ԲԿԳ համակարգողի խոսքով՝ կառավարությունն այժմ քննարկում է պաշտոնական բազմաշահառու խմբի ստեղծման հնարավորությունը:⁹⁴		
2.1 ԲԿԳ կայքը. Կառավարությունը գործարկել է ԲԿԳ պաշտոնական կայքը՝ https://ogp.gov.am/huugteul, որտեղ հասանելի են ԲԿԳ-ի, գործողությունների նախորդ և ընթացիկ ծրագրերի, աշխատանքային խմբի և այլ թեմաների մասին ընդհանուր տեղեկություններ (անգլերեն և հայերեն): Կայք մուտք գործելու համար գրանցվելու կարիք չկա:	Այո	Ենթակա է գնահատման Արդյունքների վերաբերյալ զեկույցում
2.2 Շտեմաբան. ԲԿԳ կայքում բոլոր հանձնառությունները ներկայացված են առանձին-առանձին՝ յուրաքանչյուր գործողության մասին տեղեկատվության համար հատկացված դաշտով: Քանի որ գործողությունների հինգերորդ ծրագիրը վերջերս է մեկնարկել, դրա իրականացմանը վերաբերող փաստաթղթեր դեռ չկան: Գործողությունների նախորդ ծրագրի առանձին հանձնառությունների կատարման վերաբերյալ նկարագրեր կան, որոնք որոշ դեպքերում ուղեկցվում են հղումներով:	Այո	Ենթակա է գնահատման Արդյունքների վերաբերյալ զեկույցում
3.1 Նախապես ծանուցում. Կառավարության ԲԿԳ համակարգողը 2021 թվականի հոկտեմբերին էլեկտրոնային նամակով շահագրգիռ կողմերին է ուղարկել համաստեղծման աշխատանքների ժամանակացույցը՝ նշելով, որ նոյեմբերին նախատեսվում է առաջարկների հավաքագրման մեկնարկը:⁹⁵ Հանձնառությունների համար առաջարկներ ներկայացնելու ձևաթուղթը հասանելի է եղել կառավարության ԲԿԳ կայքում 2021 թվականի նոյեմբերին և դեկտեմբերին: ԲԿԳ-Հայաստան ֆեյսբուքյան էջում նույնպես հայտարարություն է հրապարակվել՝ քաղաքացիներին հրավիրելով առաջարկներ ներկայացնել:⁹⁶ 2022 թվականի հունվարին կառավարության ԲԿԳ համակարգողը էլեկտրոնային նամակով տեղեկացրել է շահագրգիռ կողմերին ժամկետների փոփոխության վերաբերյալ՝ նշելով, որ նախատեսվում է գործընթացը ավարտին հասցնել մինչև 2022 թվականի հունիսը:	Այո	Կիրառելի չէ
3.2 Իրազեկում. Կառավարությունը և քաղաքացիական հասարակությունը գործողությունների ծրագրի վերաբերյալ իրազեկման բազմաթիվ աշխատանքներ են իրականացրել: Արմավիրի զարգացման կենտրոնը, Իրավաբանների հայկական ասոցիացիան և Ինֆորմացիայի ազատության կենտրոնը մի շարք միջոցառումներ են կազմակերպել՝ համագործակցելով կառավարության ԲԿԳ համակարգողի հետ «ԵՄ-ը հանուն բարեվարքության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագրի շրջանակներում: Իրավաբանների հայկական ասոցիացիան 2020 թվականի ավարտին մի շարք հոդվածներ է հրապարակել ԲԿԳ գործընթացի վերաբերյալ:⁹⁷ 2021	Այո	Կիրառելի չէ

թվականի նոյեմբերին և դեկտեմբերին կառավարությունը և գործընկեր ԲՀԿ-ները մասնակցության հնարավորությունների վերաբերյալ համատեղ առցանց հանդիպումներ են կազմակերպել:⁹⁸ Կառավարությունը YouTube հարթակում տեսանյութ է հրապարակել, իսկ Հանրային հեռուստատեսությամբ տեղեկատվություն է հեռարձակել ԲԿԳ գործընթացի և գործողությունների ծրագրի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու հնարավորությունների մասին:⁹⁹ Կառավարությունը տեղեկատվություն է տեղադրել նաև ֆեյսբուքյան իր էջում և ԲԿԳ-Հայաստան ֆեյսբուքյան էջում:¹⁰⁰ Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները առաջարկներ ներկայացնելու հրավերը տարածել են էլեկտրոնային փոստերի իրենց ցանկերով: Բաց կառավարման շաբաթվա ընթացքում (2022թ. մայիս) կառավարությունը և ԲՀԿ-ները կազմակերպեցին ռադիոհաղորդում, «Բաց կառավարման առաջնորդ կանայք» թեմայով միջոցառում և աշխատանքային խմբի հանդիպման վերաբերյալ լրատվական նյութ թողարկեցին:¹⁰¹ Բնֆորմացիայի ազատության կենտրոնն ինֆոգրաֆիկա է հրապարակել ԲԿԳ գործընթացի և որոշ հանձնառությունների վերաբերյալ:¹⁰² Արմավիրի զարգացման կենտրոնը 2022 թվականի օգոստոսից նոյեմբեր ամիսներին հանդիպումներ է կազմակերպել քաղաքապետարանում՝ ԲԿԳ-ի մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու և գործողությունների ծրագրի համար լրացուցիչ առաջարկներ հավաքելու նպատակով:¹⁰³		
3.3 Հետադարձ կապի կառուցակարգ. Կառավարությունը ԲԿԳ կայքում¹⁰⁴ հրապարակել է գործողությունների ծրագրի վերաբերյալ առաջարկություններ հավաքագրելու ձևաթուղթը և տարածել այն էլեկտրոնային փոստի, իր կայքի և ԲԿԳ-Հայաստան ֆեյսբուքյան էջի միջոցով: Առաջարկությունների հավաքագրման գործընթացը բաց էր 2021 թվականի նոյեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 15-ը: Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում և կառավարության ԲԿԳ համակարգողի հետ համատեղ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶՕ) «Կուլբա լաբ» գրասենյակը 2021 թվականի դեկտեմբերին կազմակերպել է փորձագիտական աշխատաժողով՝ հանձնառությունների առաջարկներ հավաքելու նպատակով: Արմավիրի զարգացման կենտրոնը և կառավարությունը 2022 թվականի մարտին չորս թեմատիկ հանդիպում են համատեղ կազմակերպել՝ քննարկելու կարճ ցանկում ներառված հանձնառությունները,¹⁰⁵ իսկ Իրավաբանների հայկական ասոցիացիան առցանց քննարկումներ է կազմակերպել:¹⁰⁶	Այո	Կիրառելի չէ
4.1 Պատճառաբանված պատասխան. Կառավարության ԲԿԳ համակարգողը փաստաթղթավորել է շահագրգիռ կողմերից ստացված առաջարկները և էլեկտրոնային փոստով ուղարկել աշխատանքային խմբի անդամներին: Կառավարությունը փաստաթղթավորել է նաև շահագրգիռ կողմերից ստացված այն առաջարկները, որոնք տեղադրվել են e-draft հարթակում, որտեղ հրապարակվել էր գործողությունների ծրագրի նախագիծը:¹⁰⁷ 2021 թվականի դեկտեմբերին կայացած աշխատաժողովի ընթացքում ստացված առաջարկները, 2022 թվականի մարտին կայացած թեմատիկ	Այո	Կիրառելի չէ

հանդիպումները և համայնքային հանդիպումները փաստաթղթավորվել են ՔՀԿ-ների ղեկույցներում և ըստ կարիքի ներառվել համապատասխան հանձնառություններում: Նախքան գործողությունների ծրագրի հաստատումը, կառավարությունը ԲԿԳ կայքում հրապարակել է շահագրգիռ կողմերից ստացած առաջարկների հետադարձ կապը:¹⁰⁸ Այն ՔՀԿ-ները, որոնք մասնակցել են համաստեղծման միջոցառումներին, նշել են, որ իրենց առաջարկների վերաբերյալ նաև բանավոր արձագանք են ստացել այդ միջոցառումների և կառավարության ԲԿԳ համակարգողի հետ անձնական հաղորդակցության ընթացքում: Սակայն միջոցառումներին հրավիրվել են միայն այն շահագրգիռ կողմերը, որոնց առաջարկներն ընդգրկվել են հանձնառությունների կարճ ցուցակում, մինչդեռ առաջարկներ ներկայացրած այլ շահագրգիռ կողմերի հետ կապ չի հաստատվել:		
5.1 Բաց իրականացում. Արդյունքների վերաբերյալ ղեկույցում ԱՀՄ-ն կգնահատի, թե արդյոք հանդիպումներ են եղել քաղաքացիական հասարակության շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ ներկայացնելու իրականացման արդյունքները և հնարավորություն տալու քաղաքացիական հասարակությանը առաջարկներով հանդես գալ:	Կիրառելի չէ	<i>Ենթակա է գնահատման Արդյունքների վերաբերյալ ղեկույցում</i>

Հայաստանի համաստեղծման գործընթացը մեծապես ապահովվել է միջազգային դոնորների ֆինանսավորմամբ, ներառյալ ՄԱԶԾ «Կուլբա լաբի»՝ ԵՄ կողմից ֆինանսավորված ծրագիրը¹⁰⁹ և ԲԿԳ-ի «ԵՄ-ը հանուն բարեվարքության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագիրը: Այս աջակցությունը զգալիորեն նպաստեց խորհրդակցությունների որակի ու քանակի բարելավմանը՝ թույլ տալով ավելի մեծ թվով առկա ու առցանց քննարկումներ իրականացնել և խթանել ավելի ծավալուն իրազեկումը: Գործողությունների նախորդ ծրագրի համեմատ կարևոր փոփոխություն էր փորձագիտական հանդիպումների կազմակերպումը՝ առկա խնդիրների վերաբերյալ ընդհանուր տեսլականների շուրջ հանձնառություններ ձևակերպելու նպատակով:

Թեև շահագրգիռ կազմակերպությունները և անհատները կարող էին առաջարկներ ներկայացնել գործողությունների ծրագրի վերաբերյալ՝ լրացնելով հայտի ձևաթուղթը, ԱՀՄ-ն առաջարկում է նախօրոք ավելի շատ տեղեկություններ տրամադրել ԲԿԳ գործընթացի վերաբերյալ: Այսինքն, անհրաժեշտ է առաջարկներ ներկայացնելու հնարավորության մասին իրազեկվածության բարելավման, ինչպես նաև առաջիկա հանդիպումների և քննարկումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման, որտեղ հստակ կնշվեն մասնակցության համար սահմանված չափորոշիչները: Ի լրումն՝ ԱՀՄ-ն առաջարկում է թիրախավորված պատասխաններ ուղարկել բոլոր այն անհատներին ու կազմակերպություններին, որոնք առաջարկություններ են ներկայացրել հանձնառությունների վերաբերյալ՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք նրանց առաջարկները կարճ ցուցակում ներառվել են, թե ոչ:

Թեև կառավարության ԲԿԳ համակարգողը գործողությունների նախորդ ծրագրի աշխատանքային խմբի անդամների և այլ շահագրգիռ անձանց շրջանում նամակագրության միջոցով տեղեկատվություն է տարածել համաստեղծման գործընթացի վերաբերյալ, սակայն բազմաշահառու միջոցառումներին մասնակցելու կանոնների և ընթացակարգերի մասին

ԱՀՄ Գործողությունների ծրագրի ուսումնասիրություն. Հայաստան 2022-2024
Հանրային քննարկման համար հասանելի տարբերակ. մեջբերումներն արգելվում են

հրապարակայնորեն հասանելի տեղեկատվություն չի եղել: ԲԿԳ մասնակցության և համաստեղծման չափանիշներին համապատասխանությունը ապահովելու համար՝ ԱՀՄ-ն առաջարկում է հրապարակել համաստեղծման և իրականացման գործընթացներում շահակիցների մասնակցության հիմնական կանոնները: Ցանկալի է, որ այս կանոններով հստակեցվեն Հայաստանի բազմաշահառու հարթակի ներկայիս լիազորությունները, կազմը և կառուցվածքը: Ինչպես նշվեց, կառավարությունն այժմ քննարկում է պաշտոնական բազմաշահառու ֆորումի ստեղծման հնարավորությունը: ՄԱԶԾ աջակցությամբ իրականացված՝ Հայաստանում ԲԿԳ գործընթացի վերաբերյալ իր հետազոտության մեջ Արմավիրի զարգացման կենտրոնն առաջարկել է բազմաշահառու ֆորումում առանձնացնել երկու մակարդակ: Առաջին մակարդակում կընդգրկվեն որոշումներ կայացնելու լիազորություն ունեցող բարձրաստիճան պետական պաշտոնյաները, ՔՀԿ ցանցերն ու միությունները: Երկրորդ մակարդակում կընդգրկվեն առանձին հանձնառությունների համար պատասխանատու պետական մարմինների ղեկավարները և այն ՔՀԿ-ները, որոնք շահագրգռված են աջակցելու հանձնառությունների իրականացմանը:¹¹⁰

⁸⁸ «ԲԿԳ մասնակցության և համաստեղծման չափանիշները», Բաց կառավարման գործընկերություն, 24 նոյեմբերի 2021թ., <https://www.opengovpartnership.org/ogp-participation-co-creation-standards/>:

⁸⁹ «ԱՀՄ ուղեցույց նվազագույն պահանջների գնահատման համար», Բաց կառավարման գործընկերություն, 31 մայիսի 2022 թ., <https://www.opengovpartnership.org/documents/irm-guidelines-for-the-assessment-of-minimum-requirements/>:

⁹⁰ «Բազմաշահառու խումբ. Բաց կառավարման գործընկերություն - Հայաստան ընդլայնված աշխատանքային խմբի նիստ», 7 հոկտեմբերի 2022թ., <https://ogp.gov.am/hy/Հանդիպումներ/open-government-partnership-armenia-working-group-session>; «ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված նիստ», YouTube, 7 հոկտեմբերի 2022 թ., <https://www.youtube.com/watch?v=dLFRJcRcpBk>; «Բազմաշահառու խումբ. Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան աշխատանքային խմբի հանդիպում», Բաց կառավարման գործընկերություն, 27 հոկտեմբերի 2021թ., <https://ogp.gov.am/hy/Հանդիպումներ/բաց-կառավարման-գործընկերություն-հայաստան-աշխատանքային-խմբի-նիստ>; «ԲԿԳ-Հայաստան խմբի հանդիպումը նոր ծրագրի ձևավորման վերաբերյալ», YouTube, 27 հոկտեմբերի 2021 թ., <https://www.youtube.com/watch?v=yWeSZQX4pRU>; «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան» (Ֆեյսբուքյան գրառում հանդիպման վերաբերյալ), Facebook, 19 մայիսի 2022թ., <https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0jMSUcdSnow6fsKEcR9N7STXBnzZHZLWgqsGQmdUL6TgocMnFHkxuxaM3nTX6ZGjl>; «Թափանցիկ կառավարման համակարգ ունենալը ՀՀ կառավարության առաջնահերթություններից է», Լուրեր, YouTube, 19 մայիսի 2022թ., <https://www.youtube.com/watch?v=TXCtAwIOO78>:

⁹¹ «Միանալ խմբին», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, <https://ogp.gov.am/hy/Ինչպես-միանալ-խմբին>:

⁹² Տե՛ս ֆեյսբուքյան գրառումները հանդիպումների վերաբերյալ՝ «Կուրա լաբ», Facebook, 5 դեկտեմբերի 2021 թ., <https://www.facebook.com/KolbaLab/posts/pfbid02dKwubHcHpGV9eoGK1twjcAXQoY8aSF9Rku3EJRsdDY09ykSK8EXZvDeDdNZ6Vo8l>; «Արմավիրի զարգացման կենտրոն», Facebook, 8 մարտի 2022թ., <https://www.facebook.com/armavirdc/posts/pfbid0zr1bKSqLvRWxrKC5q6etA9KZQVU1haTgugm5yTVJ4XLAPFXUUA1msdUZryGG5BzYl>; «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», Facebook, 9 մարտի 2022թ., <https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid02IEuQ7fHXZ3274gtM1VnAfaVeR8CTdx7DwMvj07umkx2aLviJvGwNy3msc79WxEx7l>; «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», Facebook, 11 մարտի 2022թ., <https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0kfedEWTx2sYyNtUXCjo8GA3vFPBxHtydsbuBvzZFCRd5tyDNAJyM5trTGjjYdXl>; «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», Facebook, 17 մարտի 2022 թ., <https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0vmnCKe8NbGwK96xMfUjt2eRVPtau5tGh5UrGcyyviGTvsq1kGU9YrWamXP9nvLfI>:

⁹³ «Խմբի անդամներ», Բաց կառավարման գործընկերություն. Հայաստան, <https://ogp.gov.am/hy/Խմբի-մասին>:

⁹⁴ Լիլյա Աֆրիկյան (վարչապետի աշխատակազմ), ԱՀՄ հետազոտողի կողմից անցկացված հարցազրույց, 22 նոյեմբերի 2022թ.:

⁹⁵ Այդ ժամանակ նախատեսվում էր, որ գործողությունների ծրագիրը պետք է հաստատվի 2022 թվականի հունվարին:

⁹⁶ԲԿԳ-Հայաստան ֆեյսբուքյան գրառումները՝ «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», Facebook, 5 նոյեմբերի 2021թ.,

https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid034n96xkMvavqNDewwhRPqL8KtGAwcyxQ_iKWJfcZgjaL2fPV5VoKKJd1BEUAkusnmBl; «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», Facebook, 10 նոյեմբերի 2021թ.,

<https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid031KxYHFw2tM36qhi6R9J2GCbXMS2d23fdQjlm8Vwy4WefCFuTTUaG84zLPoQm2LBEI>; «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», Facebook, 1 դեկտեմբերի 2021թ.,

https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid02SVSfYw7K3pZeKK3mHVnG4ZChAjDFtrFI_V1JkPsCxoSQnt1vtBPAPzOQPKKhtPxjyl:

⁹⁷ «Ի՞նչ են իրենցից ենթադրում «Բաց կառավարման գործընկերության» հանձնառությունները», IRABAN.NET, 29 դեկտեմբերի 2020թ., <https://iravaban.net/312920.html>; «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության իրականացման փուլում կառավարությունն առավել շատ ունի քաղաքացիների հետադարձ կապի կարիքը, IRABAN.NET, 15 դեկտեմբերի 2020թ., <https://iravaban.net/312032.html>, Անհատ քաղաքացիները ևս կարող են խնդիրներ ներկայացնել. ի՞նչ է «Բաց կառավարման գործընկերությունը», IRABAN.NET, 10 դեկտեմբերի 2020 թ., <https://iravaban.net/311484.html>:

⁹⁸ «Մարզային հանդիպումներ՝ «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նոր գործողությունների ծրագրի ձևավորման համար», Բաց կառավարման գործընկերություն. Հայաստան, 10 դեկտեմբերի 2021թ., <https://ogp.gov.am/hy/Նորություններ/մարզային-հանդիպումներ-«բաց-կառավարման-գործընկերություն-հայաստան»-նոր-գործողությունների-ծրագրի-ձևավ>; «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», Facebook, 22 դեկտեմբերի 2021թ.,

<https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0LPGz293TconxqPy4NuER66FZ7bqrbHz5S8Hpt2Y1QkJNURNs8qcwJLhg7KmYGNl>:

⁹⁹ «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնությունը հանրությունից առաջարկների է սպասում, YouTube, 6 դեկտեմբերի 2021 թ., <https://www.youtube.com/watch?v=RpWBU7E5gM0&t=18s>.

¹⁰⁰ ՀՀ կառավարության ֆեյսբուքյան էջ, Facebook, 1 դեկտեմբերի 2021թ.,

<https://www.facebook.com/watch/?v=240904721473570>; Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան, Facebook, 5 նոյեմբերի 2021թ., https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid034n96xkMvavqNDewwhRPqL8KtGAwcyxQ_iKWJfcZgjaL2fPV5VoKKJd1BEUAkusnmBl:

¹⁰¹ Հայաստանի հանրային ռադիո, «Քո ձայնը», Facebook, 16 մայիսի 2022թ.,

<https://www.facebook.com/armradio.am/videos/573370194093057>. «Բաց կառավարման առաջնորդ կանայք» միջոցառմանը քննարկվեց կանանց դերը ՀՀ-ում իրականացվող բարեփոխումներում, Արմենպրես, 19 մայիսի 2022թ., <https://www.armenpress.am/arm/news/1083659/>; «Բաց կառավարման առաջնորդ կանայք» միջոցառմանը ներկայացվել է կանանց դերը, YouTube, 20 մայիսի 2022 թ., <https://www.youtube.com/watch?v=a63MxSioKi0>;

«Թափանցիկ կառավարման համակարգ ունենալը», <https://www.youtube.com/watch?v=TXCtAwIOO78>:
¹⁰² «Բաց կառավարման գործընկերություն. Հայաստան», Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 27 ապրիլի 2022 թ., <http://www.foi.am/hy/infopages/item/2227/>:

¹⁰³ «Արմավիրի զարգացման կենտրոն», Facebook, 3 սեպտեմբերի 2022թ.,

<https://www.facebook.com/armavirdc/posts/pfbid0235G41A9BAvnmG66eePWrljdW4X5yxZ6ibnPhhW86cnXttUnxcbruwtU6H5Q89JyXyl>; «Արմավիրի զարգացման կենտրոն», Facebook, 26 սեպտեմբերի 2022 թ., <https://www.facebook.com/armavirdc/posts/pfbid02kP9PLs3u4qojW1Jg6mFz61hPxuFtEetJSMUMNvr2XjuWVpkpN1yt7sGC9e9NQOEBI>; «Արմավիրի զարգացման կենտրոն», Facebook, 22 նոյեմբերի 2022 թ., <https://www.facebook.com/armavirdc/posts/pfbid02bkJooRqTZhGRzTbLndEMvDV239v7vyQamg3Zm6QUzHh3EBDs5maKRU2KKhcvtRtiwl>:

¹⁰⁴ Էլեկտրոնային ձևաթուղթը հասանելի էր հետևյալ հղմամբ՝ <https://ogp.gov.am/hy/Նոր/բլկ-նոր>, 2021 թվականի նոյեմբերից դեկտեմբեր ամիսներին՝ առաջարկների հավաքագրման ժամանակահատվածի ընթացքում: Այն ներկայումս անհասանելի է:

¹⁰⁵ Տե՛ս հանդիպումների վերաբերյալ ֆեյսբուքյան հրապարակումները. «Կոլբա լաբ»,

<https://www.facebook.com/KolbaLab/posts/pfbid02dKwubHcHpGV9eoGK1twjcAXQoY8aSF9Rku3EIRsxdDY09ykSK8EXZvDeDdNZ6Vo8l>; «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», 8 մարտի 2022թ., <https://www.facebook.com/armavirdc/posts/pfbid0zr1bKSqLvRwXrKC5q6etA9KZQVU1haTgugm5yTVJ4XLaPFxUUA1ms>

[dUZryGG5BzYI](https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid02JEuQ7fHXZ3274gtM1VnAfaVeR8CTdx7DwMvjo7umkx2aLvijvGwNy3msc79WxEx7I); «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», 9 մարտի 2022 թ., <https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid02JEuQ7fHXZ3274gtM1VnAfaVeR8CTdx7DwMvjo7umkx2aLvijvGwNy3msc79WxEx7I>; «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», 11 մարտի 2022 թ., <https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0kfedEWTx2sYyNtUXCjo8GA3vFPBxHttydsbuBvzZFCRd5tyDNajyM5trTGIjYdXI>; «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», 17 մարտի 2022 թ., <https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0vmnCKe8NbGwK96xMfUjt2eRVPtau5tGh5UrGcyvviGTvsq1kijGU9YrWamXP9nvLfl>:

¹⁰⁶«ԲԿԳ ազգային գործողությունների 5-րդ ծրագրի մշակման շրջանակներում հանրային-մասնավոր երկխոսության ձևաչափով առցանց քննարկում. հանրային բարեվարքություն, պետական գնումներ», Իրավաբանների հայկական ասոցիացիա, 11 մայիսի 2022 թ., <https://armia.am/49305.html>; «Հանրային-մասնավոր երկխոսություն. հանրային հաղորդակցման ռազմավարության և էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման շուրջ», Իրավաբանների հայկական ասոցիացիա, 17 մայիսի 2022 թ., <https://armia.am/49308.html>; «Աշխատանքային պայմանագրերի թվային ստորագրում և «Բարև բալիկ» տեղեկատվական հարթակի ներդրում. առցանց քննարկում հանրային-մասնավոր երկխոսության ձևաչափով», Իրավաբանների հայկական ասոցիացիա, 24 մայիսի 2022 թ., <https://armia.am/49315.html>; «Բյուջետային գործընթացում մասնակցային մեխանիզմների զարգացում և իրական շահառուների մասով գործող, նախատեսվող ռեեստրների փոխգործելիություն. առցանց քննարկում հանրային-մասնավոր երկխոսության ձևաչափով», Իրավաբանների հայկական ասոցիացիա, 30 մայիսի 2022 թ., <https://armia.am/49328.html>:

¹⁰⁷«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին (առաջարկների ամփոփաթեթը), Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/4581/digest>:

¹⁰⁸Տե՛ս «ՀՀ կառավարությունը հրապարակել է ԲԿԳ-Հայաստան 2022-2024 թթ. ծրագրի համար ներկայացված առաջարկների ամփոփաթեթը», Բաց կառավարման գործընկերություն. Հայաստան, 20 սեպտեմբերի 2022թ., <https://ogp.gov.am/hy/Նորություններ/հհ-կառավարությունը-հրապարակել-է-բկգ-2022-2024-թթ-ծրագրի-համար-ներկայացված-առաջարկների-ամփոփաթեթը>:

¹⁰⁹«Ապագան այսօր. կանանց, երիտասարդների և երեխաներին հզորացում հանուն Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման», Եվրոպական միությունը Հայաստանի համար, <https://eu4armenia.eu/projects/eu-project-page/?id=1242#:~:text=The%20FUTURE%20TODAY%20project%20is,government%20accountability%20and%20transparency%20mechanisms>:

¹¹⁰«ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ Բաց կառավարման գործընկերության ազգային գործողությունների 5րդ ծրագրի երկու ոլորտային բարեփոխումների վերաբերյալ հանրային կարծիքի», Արմավիրի զարգացման կենտրոն, փետրվար 2022թ., <https://armavirdc.org/hetazotutyun/3>: